

Ա. Յովոնիս  
Ա. Մուսեան

Մաքսիմ Գորկի



891 71  
Հ- 23



22 JUN 2007

891.71

Հ-23

ար

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ  
Ա. ՄՈՎԿՅԱՆ

25 NOV 2010

40204  
40204

# ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

(Թարգմանություններ յիշ հոդվածներ)

2  
1  
0  
1  
5

Պիտկան հասարակություն

Տերեփան


1936



13 JUL 2013  
DUS MUL SE

12.436

Պատ. Խմբագիր՝ Գ. Շովենան  
Տեխ. Խմբագիր՝ Լ. Ռոհանյան  
Արքազրիչ՝ Ս. Շահբաղյան



Հր. 3772 գլանվառ № 2160  
Գատալեր 824. տիրաժ 4000

Հանձնված և ստորագրության  
23 հունիսի 1936 թ. ստորագրված  
և սպելու հուլիսի 13-ին 1936 թ.

Պետհրատի տպարան,  
Յերևան, II Գնունի, № 4

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեռավ պրոլետարիատի մեծանուն յնրդիչ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին: 20-րդ դարի համաշխարհային զբականության պատմությունը չուներ նրա հայտարար մի ուրիշը, գորի անունն այնպիսի հերոսական ուժքնությամբ հնչեց բոլոր ժողովուրդների, բոլոր ազգությունների գրական, հասարակական ու քաղաքական կյանքում: Գորկին վորոշեց զրչի մեծ վարպետ, վորպես պայծառ հասարակական դեմք բացառիկ միջազգային մասաւայականություն եր վայրում: Յերկրագնդի վրա չկա համարյա գիր ունեցող մի ազգություն, վոր թարգմանած չլինի նրան, չկա անդամ մի խուզ անկյուն, ուր լսված չլինի Գորկու անունը:

Մեզ մոտ ԽՍՀՄ-ի ժողովուրդների ամենասիրելի զրոյն է Գորկին: Նրա աշխատությունները թարգմանվել ու հաստարակվել են տառյալ հաղարավոր որինակներով: Տասնյակ մասր ժողովուրդներ լենինի -Ստալինի հանճարեղ ազգային քաղաքականության չնորհի կարծ ժամանակամիջոցում կարողացան ստեղծել իրենց գիրն ու գրականությունը և այն առաջին թոթովով բառերի թվում նրանք լսում ու կարգում են Մաքսիմ Գորկու անունը:

Առաջին անդամ յերեան դալով Անդրկովկասի  
մամուլում և տարիների ի վեր կազ պահպանելով  
այդ յերկրի զրական, հասարակական ու քաղաքա-  
կան կյանքի հետ Գորկին գառնում և Անդրկովկասի  
ժողովուրդների աշխատավոր մասսաների ամենասիրեւ  
մի յերգիչը: Զնայած գեներալ Գորկինի կատաղի  
բանությամբ ստեղծված զառն ու խավար մթնոլոր-  
տին այնուամենայնիվ Գորկու հուժկու ձայնը հըն-  
չում եր վոչ միայն Անդրկովկասի ոռւստիսն մամու-  
լում, այլ նաև այդ յերկրի մյուս ժողովուրդների  
մամուլում:

Ինքնըստինքյան հետաքրքիր ու լուրջ ուսումնա-  
րության արժանի յե պրեկտարական այդ մեծագույն  
յերգչի զրական ու հասարակական կյանքը հայ իրա-  
կանության մէջ: Գորկին համաշխարհային զրականու-  
թյան այն բացառիկ գեմքն ե, վոր ամենից շատ և  
թարգմանվել հայերեն: Երա վաղ շրջանի փոքրիկ նո-  
վեները անխոտիր կերպով թարգմանվել ու տպագրվել  
են նախաճեղափոխական հայ մամուլում: Այդ թարգ-  
մանությունների գործն առանձնատես մէծ թափ և  
առնում 900-ական թվականներից հետո: Պայքար  
Գորկու համար ու Գորկու գեմք քիչ եջեր չեն դրա-  
վում հայ անցյալի մամուլում: Այդ պայքարութ  
վճարական վեր և խաղացել հայ բոլչեկիների քննադա-  
տությունը:

Ստեփան Շահումյանը մի խումբ կոմունիստ ըն-  
կերների հետ միասին (Ա. Մուսյան, Հ. Հակոբյան,  
Թ. Քաջոյան և ուրիշները) կազմակերպում ե Գոր-  
կու մասսայականացումը և նրա համար տարվող

պայքարը: Ինըը Շահումյանն առաջինն եր (1901թ.)  
վոր թարգմանեց Մ. Գորկու «Մի անդամ աշնանը»  
հիանալի պատմվածքը: Դա առաջին յերկն եր Գոր-  
կուց, վոր առանձին գրքով լույս տեսալ հայերեն  
լեզվով: Թարգմանությունը բավական չեր, հարկա-  
վոր եր հոգվածներ դրել, հարկավոր եր մերկացնել  
Գորկու բազմաթիվ թշնամիներին Անդրկովկասում,  
հարկավոր եր ծանոթացնել մասսաներին Գորկու  
հետ, հարկավոր եր ցույց տալ նրա համաշխարհա-  
յին նշանակությունը վորպես արվեստագետի, վոր-  
պես մտածողի: Յել ահա Շահումյանը հրապարակ  
ե գալիս մի ընդարձակ քննադատական հողվածով  
Գորկու գեղարվեստական աշխատությունների մասին:  
Այդ հոգվածում Շահումյանը բաշեկիցյան հասուկ  
սրությամբ հարվածում ե բուրժուազիայի բոլոր  
տեսակի լակերներին, զորոնք ամեն կերպ ուզում ելին  
վարկարեկել, աղավաղել Գորկու գրական ու հասա-  
րակական գեմքը Անդրկովկասի աշխատավորության  
առաջ: Յել չնայած ֆանդարմերիայի սև զենզու-  
րայի ամենախիստ պայմաններին Շահումյանը գեռ  
1911թ. հրապարակութեն հայտարարեց, վոր «Գոր-  
կին պրոլետարական գրականության զարդն ու պար-  
ծանքն ե» և վոր քրանչուները հպարտությամբ կա-  
ռող են ասել. —Այս՝ Գորկին մերն ե, նա մեր  
նկարիչն ե, մեր բարեկամը ու զինակիցը՝ աշխա-  
տանքի ազատագրման վեհ պայքարի մեջ»:

Հետագայում «Հայ զրականության ժողովա-  
ժուցի մասին գրած իր հոգվածում (1916թ.)  
Շահումյանը գարճաւ բարձր գնահատելով Մաքսիմ

Գորկու դերը պրոլետարական ինտերնացիոնալ զրահ կանություն ստեղծելու պրոցեսում անվանում ե նրան «միջազգայնության մաքուր զարգմունքների ու ձգտումների դրուչակակիրք»:

Շահումյանը մենակ չեր իր այն պայքարի ընթացքում, վոր նա տանում եր Գորկու համար: Նրան հետեւում եր նաև մի ուրիշ ականավոր բոլ-չեփեկ—Ա. Մոռավյանը: Ընկ. Մոռավյանը հրապարակ յեւալ մի հատուկ հոդվածով «Պայքար» թերթում (1916 թ.) և վերլուծեց Գորկու գեղեցիկ հեքիաթները՝ իտալիայի բանվորների կյանքից: Նախապետ Ջրելով ուրեմն հայ բուրժուական քննադատների բամբասանքները Գորկու յերկերի գեղարվեստական արժեքի մասին ընկ. Մոռավյանն ընդգծում ե— «Այդ յերկերը (Գորկու վերջին արջանի յերկերը) յեկան ապացուցելու, վոր պրոլետարյանի աշխարհայցը ու աշխարհազդացումը Գորկու գեղարվեստական ստեղծագործությանը հզոր թափ են տը-վելլը: «Իսկ նրա հեքիաթները,—գրում ե Մոռավյանը,— վողողված են խոր մարդկային անկեղծ սիրով ու մարդարեական հավատով գեղի մարդկության պայծառ ապահան: Ամբողջ գրքից բուրում ե մի զարժմանալի ու վարակիչ լավատեսություն, կենացթոթիու աշխարհազդացում»:

Ընկ. Մոռավյանը նույնպես չի բավականանում միայն հոգված դրելով. նա ինքն ևս ձեռնամուխ է լինում Մաքսիմ Գորկու իտալական գեղեցիկ հեքիաթների թարգմանության դրծին:

Այս փոքրիկ ժողովածուն, վորը մենք կազմել ենք Գորկու մահվան առթիվ՝ հայ անցյալի բոլ-չեփեկան մամուլից, ընդուրկում ե՝ Ս. Շահումյանի «Մի անգամ աշխանը» թարգմանությունը և նրա հոգվածը՝ Գորկու մասին, Ա. Մոռավյանի թարգմանությունը Գորկու հեքիաթներից և նրա հոգվածը՝ Գորկու հեքիաթների ժողովածուի մասին: Ապա ընկ. Ո. Դաշտոյանի մի թարգմանությունը նույնպես Գորկու իտալական հեքիաթների շարքից: Այս ժողովածուն մի փոքրիկ ծաղկավունչ ե, վոր մենք բերում ենք մեծանուն յերգչի պայծառ հիշատակին:

Գ. ՀՈՎՆԱՆ

20 Հունիսի 1936 թ.  
Յերեւան:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I	Մի անգամ աշնանը . . . . .	Ս. Շահումյան
II	Հեքիար . . . . .	Ա. Մռավյան
III	Հեքիար . . . . .	Ա. Մռավյան
IV	Հեքիար . . . . .	Ռ. Դաշտոյան

## I. ՄԻ ԱՆԳԱՄ ԱՇԽԱՆԸ...

... Մի անգամ՝ աշխանը յես մի չառ ան-  
հարմար և անսկսործ դրության մեջ ընկա:  
Մի տոսար քաղաք Ելի յիշիլ. վոչ մի ծա-  
նոթ չպատահեց, պրալանումս ել փող չը-  
կար. և յես մնացի այդպես առանց բնա-  
կարանի ու առանց կոպելի: Առաջին որե-  
րը յես ծախեցի հաղուստիս մի մասը, վոր  
կարելի յեր ծախել: Հետո ուղելորսիցի  
գեղի նաևահանդիրաւը, վոր դանիլում և  
«Գետաբերան» կոչվող հեռավոր քաղաքա-  
մասում: | Նավազնացության ժամանակ  
այնտեղ կյանքը յեռում եր, աշխուժ, աշ-  
խատանքով լի. մարդ հեշտությամբ կա-  
րող եր իր համար գործ գտնել: Իսկ այդ  
ժամանակ ամեն ինչ դատարկ եր ու խա-  
ղաղ, վորովհետեւ արդեն հոկտեմբեր սմ-  
ուզիա վերջերն ելին:

Յես թափառում ելի միայնակ դատարկ

շինությունների ու փոքրիկ տախտակամածած խանութիւնների միջև ու հաղիս ելի շարժում հոգնած վառքերս : Աչքերս դետնին հառած, ուղում ելի այդ ցեխերի մեջ ուսելիքի վորեւ մնացորդ դանել և մտածում ելի միենայն ժամանակ . ի՞նչ լավ բան է կուշտ լինել...

Քաղաքակրթության ներկայականներում հոգեկան քաղցն ավելի հեշտ կարելի յե հաղեցնել, քան մարմնականը : Դուք թափառում եք յերկար փողոցներով . ձեր շուրջը բարձրանում են գեղեցիկ շինություններ, վորոնց մասին ամենայն համարձակությամբ կապող եք ասել, վոր նրանք նույնչափ գեղեցիկ են և ներքուատ . նույնչափ ճաշակով ու շքեղ կահավորված : Այդ բոլորը կարող եք մեջ քաղցր մրտածմունքներ առաջ քերել ճարտարապետության, առողջապահության և ելի ուրիշ չառ մեծ-մեծ բաների մասին : Զեզ որառահում են տաք ու գեղեցիկ հագնված մարդիկ . նրանք անչափ բարի յեն և քաղաքակարի . նրանք ամենայն զգուշությամբ խույս են տալիս ձեզանից, վոր-

ակեսղի չնկատեն ձեր ցալայի գոյությունը... Ասոված վեա, քաղցած մարդու հոգին ավելի լավ ե կերպիրվում միշտ, քան կուշտ մարդու հոգին : Ահա ձեզ մի դրություն, վորից կարելի յե շատ սրամիտ յեղրակացություն դուրս բերել Վուշտ մարդկանց ողբորին :

... Գիշերը մոտենում եր : Անձրև եր գալիս և հյուսիսից մոնչալով փռում եր քամին : Նա կատաղի չկվոց եր բարձրացնուում զատարկ մնացած փայտաշեն խանութիւններում և ծեծում եր հյուրանոցների տախտակած պատուհանները : Գետի ալիքները նրա հարվածներից ուռչում ու փըրփըրում եյին և կատաղի արագությամբ, միմյանց վրա թռչելով, շտապում, անհետանում եյին մթության մեջ... Կարծեագետը զգում եր, վոր ձմեռը մոտենում եւ, և վախեցած փախչում եր ատուցի կաշկանդով չղթաներից, վոր հենց այդ գիշեր կարող եր զցել նրա վրա հյուսիսային քամին : Յերկինքը թանձր եր ու իսավար, այնտեղից անընդհատ տեղում եյին անձրեկի մանր կաթիլները : Քիչ հեռվում

Նշմարվող յերկու չորացած ու ծոված ծառերը և նրանց մոտի՝ կողքի վրա ընկած նավալիլը — լրացնում, ընդգծում եյխն բը-նության այդ տիպուր տեսարանը:

Հատակը կոտրված, չուռ յեկած նավակ և սառը քամուց կողոպտված, ծեծված ու ծերացած ծառեր... Շուրջու ամեն ինչ ա-վերիլել ու անապատ ե դարձել. յերկինքը շարունակում է սպալ, արտապլել: Մռայլ ու որտարկ ե ամեն ինչ: Կարծեա ամեն բան իմ շուրջը սկսել ե մեռնել. շուտով միմիայն յևս պիտի մնամ կենդանի, յակ հետո ինձ ել սպասում ե նույն սառը մահը:

Այդ ժամանակ յևս 18 տարեկան եյխն յերանելի՛ ժամանակ...

Ես յերկար թափառեցի սառն ու խոնավ ավագիներով, առաջներիս կրծտոյով շատ յերգեր հյուսեցի սովոր և ցրտի պատվին, և հանկարծ փոքրիկ խանութիներից մեկի յետեւ տեսա մի փոքրիկ կծկված ու դժու. նին կպած կանացի մարմին: Անձրեից թրջված շորերը կպել եյխն նրա կուցած ուսերին: Յես մոտեցա նրան ու միացի գիտել: Նա ձեռքով փորում եր թաց ալա-

պը և ուզում եր, ըստ յերեսոյթին, անցք բանալ դեպի խանութի ներսը...

— Այդ ինչի՞ համար ես փորում, հարցը ի յես նատելով կողքին...

Նա մի ճիշ արձակիեց և վեր թռալ: Այժմ, յերբ նա, դիմացս կանգնած, վա-խեցած նայում եր ինձ իր բայն բացած կապույտ աչքերով, յես տեսա, վոր դա իմ հաստկակից մի աղջիկ ե, վերին աստիճա-նի դրավիչ դեմքով, վորը, վժբախտպար, զարդարված եր յերեք հաստ մեծ կապույտ բծերով: Այդ մի սիրքը փչացնում եր տր-պավորությունը, թեև կապտածները չատ կանոնավոր եյխն դասավորված: Մի — մի հաստ հավասար չափի աչքերի սուկը և մի հաստ ճակատի մեջտեղը: Յերեսում եր, վոր խիող ձեռքը կատարելազործվել ե մարդ-կային դեմքեր փչացնելու արհեստում:

Աղջիկը նայում եր ինձ սլուն, և նրա աչ-քերում փայլող յերեյուղը հետզհետե մա-րում, անհետանում եր... Ահա նա ավա-զոտ ձեռքերը թափ տվեց, ուղղեց գլուխ ձիթ աղլուվը, վծկիլեց ու ասաց.

— Ինչպես տեսնում եմ, վոր յել ես սո-



ված... ողե՛ մի փորիք տեսնեմ... իմ ձեռքերը հոգնել են : Այստեղ, - նա դլխի շարժումով ցույց տվեց խանութը, - անպատճառ հաց վլինի, գուցե և յերշիկ : Այս խանութում դեռ առուստուր կա... .

Յես ակացի փորել . իսկ նա միքիչ կանգնեց, նայեց ինձ վրա, հետո նստեց իմ կողքին և սկսեց ողնել...

Մենք լուս աշխատում ենինք :

Յես չեմ կարող հիմա հաստատ ասել, որ մասն եյի արդյոք այդ ժամանակի քրեական որենքների հաստափոր ժողովածուն . բարոյագիտություն, սեփականության իրավունք և այլ այսպիսի բաներ, վորոնք, ինչպես ասում են իմաստուն մարդիկ, յերբեք չպետք է մոռանալ կյանքում, վոչ մի դիմումածում... Վորպետի կարելույն չափմուս լինեմ ճշմարտությանը, ինստովանութում եմ, կարծեմ, այնքան տարվել եյի փորելով, վոր ամեն բան մռացել եյի, բացի... այն բանից, ինչ վոր կարող եյի պահել խանութում :

Արդեն մթնում եր : Թաց ու ցուրտ խավարը հետզհետե թանձրանում եր իմ չուր-

ջը : Ազիքների աղմուկը հետզհետե խլանում եր, իսկ անձրևն ավելի ու ավելի ուժգին ծեծում եր նավակի տախտակները... Հեռվից լսվում եր դիչերապահի ճրապի ու մելամաղձուս ձայնը...

— Հատակը տախտակա՞ծ ե թե՞ չե, - կամաց հարցրեց ինձ իմ ողնականը :

Յես չհասկացա ինչի մասին ե հարցնում ե լուցի:

— Գուցե տախտակած ե... Այդ ժամանակի մեր չարչամքը իզուր կլինի . հողը կփոքենք, կհասանենք տախտակներին, հետո... Ավելի լավ ե կողպեքը կսուրենք... Թույլ կողպեք ե յերեսում...

Կամ մտքերը չառ տակավ են ծագում կնոջ գլխում, բայց և այնպես... ծագում են, ինչպես տեսանում եք : Յես միշտ զնահատել եմ լսվ մտքերը և աշխատել եմ կարելույն չափ ոգովել նրանցից :

Կողպեքը գտա, քաշեցի ու դուրս պոկեցի իր ողակների հետ միասին... Բնկերուհիս խնկույն ոճի պես գալարվեց և ներս սողաց խանութը բացված քառանկյունի անցքով :

— Կեցցե՛ս, տղա, — բացականչեց նա ներ

սէց :

Կնոջ մի փոքրիկ գովաստնքը ինձ համար  
աղելի արժե, քան տղամարդի յերկար դո-  
վաբանությունը, կուզեք լինի այդ տղա-  
մարդը նույնիմի աղելի պերճախոս, քան  
բոլոր հին ու նոր հսկողները միասին մեր-  
ցըսած : Բայց այն ժամանակ արամազդրու-  
թյունա այսքան լավ չեր, և յես առանց ու-  
շադրություն դարձնելու ընկերուհուս սի-  
րախոսության վրա, եւ աղջ ու վախեցած  
հարցրի .

— Բան կա՞ ...

Նա միապաղադ ձայնով ակսեց թվել իր  
դյուսերը :

— Մի դամբյուղ ... շիշերով, դատարկ  
տպայտակներ ... մի հովանոց ... մի յերկաթե-  
դություն ...

Դրանցից վոչ մեկը չեր կարելի ուտել :  
Յես դդում եյի, վոր հովանու չքանում  
են,

... Բայց հանկարծ նա ուրախ բացական-  
չեց .

— Ահա՞ ... այս վորտեղ ե :

— Ո՞վ :

— Հացը ... մի բոմբիւ ... միայն թրջած-  
ե, վերցրու ...

Բոմբին ընկարված վարձելիս մոտ, իսկ զիւ  
հետ հայտնից և ինքը հարդելի ընկերու-  
հիս : Յես իսկույն մաս - մաս արի հացը և  
սկսեցի առահա-առահ ուտել ...

— Իե ինձ ել տուր տեսնեմ ... և պետք  
է այստեղից հետահարլ ... ո՞ւր գնանք ...

Նա ուշաբը ությամբ նայեց չորս կողմը :  
— Այս, ինչ վոր նակար ե յերեսում, գնանք  
նրա տակը նստենք :

— Գնանք :

Յեկ մենք գնացինք դեպի նավակը : Յեր-  
կուս ել առահությամբ լավիում եյինք մեր  
սկարը : Կեսը մանչում եր, անձրել հետը-  
հետեւ վարարում ... Մի ինչ — վոր տեղից  
յերկար ու սուր շվեց եր լովում .  
Վարձես մեկը, ինչ վոր հորոր ու վոչլորից  
չվախեցող մի եյտի սուլում ու ծաղրում եր  
մեր աշխարհի կարգերը, այդ անպիտան  
աշնանային յերեկոն և մեղ՝ այդ յերեկոյի  
յերկու հերոսներին ... Սիրոս կծկվում ու-  
նկում եր այդ շվեցից : Այնուամենայնիվ

յես մեծ ախորժակով ուտում ելի հացը :  
Քարեկամուճիս յետ չեր մնում ինձանից , և  
մենք այդպէս մոտենում ելինք նախակին :

— Անունդ ի՞նչ ե , — զգիտեմ ինչու հարց  
որի յես :

— Նատաշա , — պատասխանեց նա ծամե-  
ռով :

Յես նայեցի նրան և սաստիկ ցավ զդացի  
սրտիս մեջ : Հետո հայացքս ուղղեցի դեպի  
իմ առաջ տարածված մթությունը , և ինձ  
թվաց , վոր բախտիս միշտ հեղնուս ու այ-  
լանգաղի դեմքը խորհրդավոր կերպով նա-  
յում ե ինձ ու ժպտում ...

... Անձրես շարունակում եր ծեծել նախա-  
կի կողեքը , և նրա մեղմ շփշփոցը տիսուր  
մտածմունքներ եր առաջացնում լոմ մեջ :  
Քամին շփշցով ներս եր խուժում հատակի  
մի ճեղքից , վորաեղ մի փոքրիկ տաշեղ ,  
քամու չնորհիվ , շարունակ ինչ-վոր անհան-  
դիստ ու վողբալի ձայներ եր հանում : Գետի  
ալիքները մողկում ելին ափերը և նույն-  
պէս վողբալի ու հուսակոտուր ձայներ հա-  
նում : Նրանք կարծես մի ինչ-վոր քան ե-  
լին պատմում , վոր վաղուց ձանձրացրել ,

զզվեցրել եր նրանց , մի սրտմաշուկ բան ,  
վորից նրանք կուղենային փախչել , բայց  
վորի մասին զեռ անհրաժեշտ և յերկար  
խոսել , պատմել . . . Անձրես շփշփոցը միա-  
նում եր ալիքների աղմուկին , և նախակի  
շուրջը , գորչ մթության մեջ , մի յերկար  
հառաջ եր լավուած . դա՝ բնության ամմիտ  
կատակներից զզված , ամառվա ու աշնան ,  
տաքի ու ցրտի , արևի ու անձրեսի անվերջ  
վորփոխություններից նեղացած ու հոգնած՝  
ծերուկ-յերկարգնդի յերկա՞ր ու ծա՞նը հա-  
ռաջն եր . . . Քամին ել իր շառաչյունով  
տիսուր , հուսահատ յերգեր եր հորինում ու  
տարածում դեստի ալիքների ու նրա սե ու  
անբնակի ափերի վրա :

Մեր տեղը , նախակի տակը , զուրկ եր  
հարմարություններից , նեղվածք եր ու խո-  
նակ . ծակված հատակից թափվում ելին  
անձրեսի ցուրտ կաթիները , սողուկում եր  
քամին : Մենք լուռ նստել գողում ելինք :  
Հողնածությունից աչքերս փակվում ելին :  
Նախաշան մեջքը զեմ եր տպել նախակի կո-  
ղին ու կուչ յեկել , մի փոքրիկ գունդ եր  
ու արձել : Ծնկները ձեռքերով գրկած ու

Կըլակը նրանց հենած, նա անթարթ նայում  
եր գետի կողմը, և նրա մեծ ու լայն քա-  
շած աջքերը ամենի ևս մեծ եյին յերեսում  
կը ենց տակի կապտածների չնորհիվ: Նա  
բոլորովին չեր շարժվում: և այդ անշար-  
ժությունն ու լուսթյունը, — զգում ե-  
յի, — վամաց-կամաց ինչ-վոր ահ եր գցում  
սրտիս մեջ. յես վախենում եյի իմ հարեւա-  
նուհուց... ուղղում եյի իսոսել նրա հետ.  
բայց չէիտեյի ինչպես սկսեմ:

Նա ինքը խոսեց:

— Ա՛ս, անիծյալ կը անք, . . . — պարզ ու  
մըրոշ արտասանեց նա:

Յեվ այդ գանգատ չեր բախտից: Երա  
ձայնի մեջ այնքան անտարերություն  
կը ար, վոր չեր կարելի ասածը զանգատի  
տեղ ընդունել: Յերեսում եր, վոր մարդի  
ուղղակի մտածել ե կյանքի մասին և յեկել  
ե մի վորոշ յեղամացությամբ, վոր և հայտ-  
նում ե այժմ, և վորին յես չեյի կը արող  
պատասխանել առանց կեղծելու, առանց  
ինձ հակասելու: Յես լուռ եյի. իսկ նա  
կարծես իսկի չեր ել նկատում ինձ, առաջ-  
վա պես անշարժ նստած եր:

— Մարդ չի ել սատկում, պրծնի...  
նորից խոսեց Նատաշան, այս անդամ կա-  
մաց ու մտաղբաղ, և դարձյալ գանգատի  
վոչ մի նշույլ: Դարձյալ յերեսում եր, վոր  
մարդ մտածել ե կյանքի մասին, նայել ե իր  
վրա և հանդիստ հոգով յեկել այն յեղամակա-  
ցության, վոր իր անձը կյանքի ծաղրից ու  
կատակներից աղատելու համար նա մի բան  
միայն կարող ե անել — «սատկել»:

Մտքի արդ չափ ճշությունն ու պար-  
զությունը սիրու լցրեց անսակլի ցամով  
ու դրվանքով, և յես զգում եյի, վոր յեթե  
շարունակեմ բռել, լաց պետք ե լինեմ...  
իսկ այդ ամոթ կը իմեներ մի վիճոջ առջեւ. մա-  
նավանդ, վոր նա ինքը ահա լաց չեր լի-  
նում: Յես վճռեցի խոսել

— Ո՞վ ե թակել քեզ, — հարցրի յես,  
վորովհետեւ չկարողացա ուրիշ, ավելի մար-  
դակարի խոսք գտնել:

— Պաշկեն, ուրիշ ո՞վ պիտի լինի, —  
պարզ ու հանդիստ պատասխանեց նա:

— Պաշկեն ո՞վ ե:

— Իմ սիրելանք... մի հացթուխ:

— Շա՞տ ե ծեծում քեզ...

— Շա՛տ . . . ամեն հարբելիս ծեծում է :

Յեվ հանկարծ նա ավելի մոտեցավ ինձ  
ու մկանց Պաշկի, իր և իրենց հարաբերու-  
թյունների մասին յերկար պատմություն  
անել: Ինքը «փողոցն ընկած աղջկիներիցն  
է, վորոնք . . . և այլն», իսկ նա մի չեկ բե-  
ղերով, լավ գարմոն ածող յերիտասարդ է:  
Նա հաճախ այցելելիս և յեղել «հասարա-  
կաց տունը» և իր ուրախ քնալությամբ  
ու գեղեցիկ շորերով, իր «դարսովի» կո-  
չիկներով ու 15 ռուբլիանոց վերարկություն  
գրավել և նատաշայի սիրու: Այն ժամա-  
նականից Պաշկեն մկանը է մշամակես «նի-  
սիա ողառվել» . . . և յերբ հաստատվել և  
այդ գերում, սովորություն և գարձռել իր  
համար նատաշայից վերցնել այն փողերը,  
վոր ուրիշ հյուրերը առանձին տավիս են  
յեղել նրան իրեւ նվեր, հարբել այդ  
փողերով և հետո գալ նատաշային ծե-  
ծել . . . Բայց այդ գեռ վոզինչ նա սկսել եր  
նատաշի առաջ «բարձը փոխել», ուրիշ  
աղջկերանց յետելից ընկնել . . .

— Դե դու ասա, սրտիս չե՞ր դիպէի

այդ . . . Ուրիշներից յես ինչով եմ պա-  
կաս . . . Նշանակում ե յես նրա համար խա-  
ղալիք ելի, ծաղրի առարկա, ստոր արա-  
րած: Անցյալ որը իրավունք վերցրի խաղ-  
յալիցից, վոր գնամ զբոնելու. յեկա նրա-  
մուտ, տեսնեմ Դուռնկեն հարբած — տրաք-  
ված նստած և նրա սենյակում: Ինքն ել,  
իհարկե, հարբած եր: Ստում եմ՝ «այ ըս-  
տոր արարած, — ստոր խարեթա . . . »: Նա  
վրա պլրամպ ինձ ու մկանց ծեծել. ի՞նչ մա-  
դերից քաշ տալ համակի վրա, ի՞նչ վոտքե-  
րի սոսկ զցել, չարդել . . . մի սար տեղ չը-  
թողեց . . . Յեվ այդ գեռ ելի վոչինչ, չո-  
րեց ամբողջովին պատաստեց . . . Աչա-  
նայիր սրանց: Հիմա յես վո՞ր քարութ-  
տամ զլուխս, ի՞նչպես յերեամ խաղելիին:  
Բոլորը պատառութեց, չովերս ել, թիկնոցս  
ել . . . Բոլորովին նոր եր թիկնոցս: Հինէ  
ուուրիլի ելի տվել. գլխաշըրս ել պոկեց . . .  
Ախ, սատված, հիմա յես ի՞նչ անեմ, —  
վայ տվեց նա հանկարծ վշտացած ու խեղդ-  
վող ձայնով:

Վայում եր նույնպես հետզհետե սաստ-  
կացող քամին . . . Ատամներս ակացին նո-

բեց պար դալ : Նա ել կուչ եր գալիս ցըրտից և արդեն այնքան մոտեցել եր ինձ, վոր յես կարողանում ելի մթության մեջ տեսնել նրա վայլող աչքերը :

— Ի՞նչ դարշելի բաներ եք բոլոր տղամարդիկդ, — խոսեց նա նորից : — Վոստերիս տակ կիցեցի ձեզ բոլորիդ... Վոր մենիլ առաջին սատկելիս լիներ ձեղանից, յերեսին կթքեցի, չեցի խղճա... վեղտուտ խողեր... Վնդատում եք, վնդատում, պոչներդ ժամանական, և հենց վոր ինձ պես մի անենելը ձեռքներդ ընկնի, պատրաստ եք խոկույն վոտնատակ տալ... գծուծ անսառուներ...

Նրա հայհոյանքները շատ պես-պես ելին, բայց ուժ չիար մեջները. վո՞չ բարկություն և վո՞չ սատելություն դեպի այդ զծուծ անսառուները» : Ընդհանրապես նրա խոսակցության սոնը շատ հանդիսու եր, բոլորովին չեր համապատասխանում ասածների մտքի և շատ աղքատ եր ձայնի յելենջներով : Բայց և այնպես այդ ինձ վըրա ավելի յեր աղքում, քան մինչև այդ ժամանակ իմ լսած բոլոր հոռետեսական

ձառերն ու վարդացած գրքերը : Այդպես եմ մեռնողի մի ճիշը ավելի բնական ե, ավելի ուժեղ ու ցնցող, քան մահվան ամենադեղարվեստական ու ամենաստույդ նվարագրությունը :

Սիրոս շատ վաստ եր, գուշե ավելի ցըրտից, քան թե հարևանուհուս ճառերից : Յես ակամայից մի ծանր ու յերկար տնքոց արձամկեցի ու առաներս կրճատացրի :

Հենց նույն վայրկյանին յերկու սառը, քոքքիկ ձեռք փաթաթվեցին ինձ, և յես լսեցի մի քաղցր ու մեզմ կարեկցությունը հնչող ձայն :

— Հը, ի՞նչ պատահեց քեզ...

Յես սպառաստ ելի յենթաղբել, վոր այդ հարցը սոալիս ե ինձ վոչ թե նաստաշան, վորը մի բովե սոաջ բոլոր տղամարդինց գարշելի արարածներ հայտարարեց ու այնքան հայնոյեց բոլորին, ու ուժիցը, բայց նա նորից սկսեց խոսել. և այս անգամ ավելի չուսում :

— Ի՞նչ կա, հո չե՞ս մըսում. սառե՞ն մս.. այ անպիտան, նստել ես ու լոել. ին-

չո՞ւ չելիր ասում, վոր մըսում ես. դեպանկիր, ձգվիր... յես ել կպառկեմ: Հա՛, այսպես, հիմա գրկիր ինձ, լավ գրկիր: Տեսնում ես, ինչ լավ բան ե. հետո մեջք մեջքի կտանք, կտանկենք այսպես գիշերը կանցնի... Յերեկի գինու յես տվել զլուխը... թէ՞ տեղից վուրս են արել... Բան չկա...»

Նա ինձ մխիթարում եր, սիրու եր տալիս:

Ո՛, յերիցս նզովյալ լինեմ յես: Վորպիսի հեղնություն կյանքի կողմից: Յերևակայեցեք, այդ ժամանակ յես ամենալուրջ կերպով զբաղված եյի մարդկության ասպարայի ինդրով. յես յերազում եյի սոցիալական բարենորոգումների, քաղաքական հեղաշրջումների մասին. խորլիմաստունք գրքեր եյի կարողում, վորոնց մեջ հայտնած մոքերը, թվում եր, չեն կարողանում լավ բարոնել նույնիսկ իրենք հեղինակները...

Յես պատրաստվում եյի մի «խոչը ներգործող-հասարակական ուժ» դառնալ, և ինձ թվում եր, վոր մասամբ արդեն հասել

Ամ իմ նապատակին: Համենային դեպս այդ ժամանակները յես յերեակայում ելի, վոր յես մի բացառիկ իրավունք ունեմ ասլուելու վորպիս կյանքի համար մի անհրաժեշտ մեծություն, վորպես պատմության մեջ խոչը դեր կատարելու ու ընդունակ մի մարդ...

Յեկ ինձ եր, վոր տաքացնում եր իր մարմնով մի պատրիվը ծախսած կին, մի անգախոտ, ջարդված-ալրորված Եյակ, վորու պոչ տեղ ունի կյանքում, վոչ գին, և վորին յես ովեմի չընկա ողնելու, այնինչ ինքը ինձ ահա ողնում եր... իսկ յեթե գլխի ել ընկնեյի, հաղիվ թե կարողանայի վորեւ կերպ ովնել նրան...

Ա՛խ, յես կուզեյի, վոր այդ բոլորը մի յերազ լիներ, մի անմիտ ու ծանր յերաղ...

Բայց, ավաղ... Անձրեկի ցուրտ կաթել-ները շարունակում եյին թափել ինձ վըրա. կուրծքս կպած եր մի ուրիշ տաք գրծքի, յերեսս շոյում եր նրա տաք չնչա-

ոռովյանը... թեև վորքը ինչ ողեշումնէր  
բայց այնքան կենդանահապր...

Քամիին վոռոնում ու հեռում եր; անձրեւ  
ծեծում եր նախակի տախտակները, ալիք-  
ները հեռում ու ազմկում եյին; Մհեք վեպել  
եյինք միմյանց, բայց դարձյալ դողում ե-  
լինք ցրտից: Յետ այդ բոլորը իրականու-  
թյուն եր:

Իսկ նատաշան քեռ ինչ-վոր իսոսում եր,  
և արագիսի քաղցր ու կարեկից ձայնով,  
ինչուս միայն կանաքը կարող են խոսել:  
Այդ գովու ու շոյող խոաքերից կրծքին  
առել մի ինչ-վոր տաքություն առաջացավ,  
և այդ տաքությունից մի ծանր քան համ-  
վեց ու ընկալ արտիս վրայից: Այդ ժամա-  
նակ արտասուրի մի հեղեղ թափիկց իմ  
աչքերից, վորը սրբեց-տարառ այն բոլոր  
կեղուը, վիշտն ու չարությունը, վորու-  
թցիւյ եր ավրոս այդ գիշերիւա լոնթաց-  
քում...

Իսկ նատաշան խոսում, համոզում. Եր  
ինձ,

— Դե, բարձական ե սիրելիս, ի՞նչքան  
եաց լինես. բարձական ե: Աստծով ամեն

բան կանցնի, կլավանաս, նոր գործ կը-  
գտնես... Բոլորը կանցնի...— և շարունակ  
համբուրում եր ինձ... համբուրում եր  
անթիվ, անհամար ու ջերմ համբույրնե-  
րով...

Այդ առաջին կանացի համբույրներն ե-  
լին, վոր մատուցանում եր ինձ կյանքը,  
և, պետք ե ալելացնել, այդ ամենալավ  
համբույրներն եյին իմ կյանքում, վորով-  
հետեւ բոլոր մնացածները վոչինչ չեյին  
տալիս իմ հոգուն, չնայած վոր շատ ու  
շատ ալելի վթանով եյին նատում ինձ...

— Դե սուս, ասում եմ... Յես վաղը  
քեզ համար մի տեղ կըանեմ, գործ կհա-  
րեմ...— կարծես լերազում բում եյի նրա  
քաղցր շառնիքը:

... Մինչեւ լույս մենք այդպես դրկված,  
պառկած եյինք: Իսկ, յերբ վոր լուսացավ,  
զուրս յեկանք նախակի տակից և գնացինք  
քաղաք... Հետո բարեկամաբար բաժանինե-  
ցինք միմյանցից...

Նրանից հետո յես այլես յերբեք չեմ  
պատահել նատաշին, թեև ամբողջ մի  
կես տարի վնասուել եմ նրան քաղաքի բոլոր

մուլթ խորչերում . . . Նրան, իմ աննման  
Նաստաշին, վորի հետ յետ անցկացրի նկառ.  
բարեածո գիշերը մի անդամ աշնանը . . .

Յեթէ նա մեռել և արգեն, վոր շատ լավ  
կլիներ նրա համար— թող հանդչեն հան-  
գիստ նրա վոսկորները. իսկ յեթէ գեռ  
կենդանի յե՞ խաղաղություն նրա տանջ-  
վող հոգուն. և թող յերբեք նրա մեջ չարթ-  
նանա իր անկման գիտակցությունը . . . վո-  
րովհետեւ այդ կլիներ նրա համար մի նոր,  
ավելորդ ու անսրուզ տանջանք . . .

1895

## II. ՀԵՔԻԱԹ

Ամենագեղեցիկ հեքիաթը՝  
կյանքի ստեղծած հեքիաթն ե.—  
Անդրբսեն

Գարուն եր: Պայծառ արևը չողջողում եր  
ու բոլոր մարդիկ ուրախ ելին. քարաշեն  
հին տների ապակիներն անդամ ջերմագին  
ժպտում ելին:

Ամբոխը զուգված եր տոնական հա-  
գուստներով ու գույնդույն հոսանք կազ-  
մած՝ անցնում եր փոքրիկ քաղաքի փողո-  
ցով: Ամբողջ քաղաքն այստեղ եր, բան-  
վորներ, դիմուրներ, բուրժուաներ ու քա-  
հանաներ, աստիճանավորներ, ձկնորսներ  
և ամենքը՝ բորբոքված զարնան հրեղեն  
չնչից— խոսում ելին սովորականից ավելի,  
յերգում ելին ու ծիծաղում: Ամբոխը առզ-  
բելու խինդով յեռուն մարմնի յեր նման-  
ուում:

Աչքի եյին գարնում գույնզգույն հովանոցներ, կանանց գլխարկներ։ Յերեխաների կարմիր ու վասպույտ գնդակները կարծես կախարդական ծաղիներ լինելին։ Կյանքի զվարթ թագավոր՝ յերեխաները խնդում ենին, ծիծաղում ու շողչողում հերիաթային արքայի ջեղի պատմումնի վրա շարած դոհարների նման։ Դեռ չծաղկած ծառերի սիրուն կոփոնները ագահարար ծծում եյին արեմի ջերմ շողերը։ Հեռվում մուզիկան հնչում եր ու կանչում։

Այս պատկերն այն տագավորությունն եր թողնում, վոր մարդիկ, կարծես, ապրել, քաղաքովելի են իրենց տանջանքներից, վոր յերեկիա որը մեր ծանր, ամոթալի ու ամենքին զրլեցրած կյանքի վերջին որն ե յեղել, իսկ այսոր... այսոր ամենքը զարժին են քից յերեխաների պես խնդադեմ ու յի հաստատուն և զվարթ հովատով ողեալի իրենց ուժերն ու անհաղթելի վամքը, վորի առաջ ամեն ինչ պետք ե ոլուխ խոնարհի և մարդիկ, ահա, համերաշխ ու վստահ քայլում են ողեալի, ապագան։

Յեվ զարմանալի, վիրավորական ու ցա-

վալի թվաց, յերբ կենտունակ այդ ամբու խի մեջ մի տխուր ողեմք յերեաց։ Նա բարձրահանակ ու ամբակաղմ մի տղամարդ եր՝ բոնած իր ջահել կնոջ թեկից։ Հավանութեան նրա տարիքը յերեսունից անց չեր, բայց մաղերն արդեն ճերմակ եյին։ Գըլիսարկը նա բոնել եր ճեռքին։ կլոր գլուխը արծաթի պես սպիտակ եր, իսկ նիհար, բայց առողջ դեմքը հանդիսաւ եր և մշտապես թախծալից։ Խոչոր ու թուխ աչքերը պարուրված եյին թերթերունքներով ու նայում եյին խոր հայացքով։ Այդպիսի աչքեր միայն այն մարդիկ են ունենում, վորոնը դառն ցալ են ունեցել, այդ ցալը մոռանալ չեն կարող ու յերեք չեն մոռանում։

— Ապա նայիր այս զույգին, — ասաց ինձ ընկերու, մանավանդ այդ տխուր տըղամարդուն։ Նա ունեցել է մի ծանր դրամա։ Այդպիսի դրամաներ այժմ հաճախ են պատահում Հյուսիսային իտալիայի բանկուրների շրջանում։

Յեվ ընկերու ինձ պատմեց։

— Այդ մարդը սոցիալիստ է, տեղահան

բանի որպական լրագրի խմբագիրը, բանվոր  
ե, արհեստով ներկարար : Նա այն մարդու-  
կանցից ե, վրոնց համար զիառությունն  
դարձել ե հաղթառ, խմբ այդ համառը շա-  
րունակ գրգռում է դիտության ծարավը :  
Կատաղի ու խելոք հակավողերական ե . նա-  
յիր, սև տերուերներն ինչ սարսափելի աշ-  
քերով են նայում նրա յետեց :

Հինգ տարի առաջ նա պրոպագանդիստ  
եր . իր խմբակներից մեկում մի անդամ  
նու պատահում է մի աղջկա, վորն խմկույն  
և յեթ զրավում է նրա ուշադրությունը :  
Այստեղ իտալիայում, կանայք շատ են սո-  
վոր լուս ու անսասան հավատի . քահաճու-  
ները յերկար ու ձիգ գարեր զարդացրել են  
կանանց այդ լողունակությունը և հասել  
են իրենց նորատակին .— մեկը, չդիտեմ ով,  
ճիշտ ե ասել, վոր կաթողիկ յեկեղեցին  
կառուցված է Անոնց կրծքի վրա : Մաղոնաս-  
յի (տիրամոր) կուլան ունի վոչ միայն կը-  
ուազաշատական գեղեցկություն, այլ նախ ե  
առաջ խելացի կուլու է : Մաղոննային ըղ-  
գալն ավելի հեշտ ե, քան Քրիստոսին :  
Մաղոննան մարդու սրտին ավելի մոտ ե,

նա հակասություններ չունի, գեհենի կը-  
րակով չի սպառնում . նա սիրառատ ե, խըլ-  
ճող ու ներող . կանանց տիրուը նա հեշտու-  
թյամբ ե վերջնականապես գերում :

Պրոպագանդիստը նկատում է, վոր աղ-  
ջիկը գիտե խոսել, հարցեր տալ : Նրա  
հարցերից յերեսում եր, վոր նա անմեղ  
կերպով հայցած ե պրոպագանդիստի գա-  
զափարձներով, բայց գեղի պրոպագանդիս-  
տը տածում եր նույն անվատահություն,  
հածախ յերկյուղ ու մինչեւ անդամ գրվանք :

Խտալական պրոպագանդիստները կըսնի  
մասին շատ են խոսում, սուր քննադրատում  
պրոպագանդիստին : Ամեն անդամ,  
յերբ պրոպագանդիստն ակսում եր այդ  
հարցերի մասին խոսել, աղջկա աչքերում  
առաջանում եր զգվանք և ատելություն,  
յերբ աղջիկը հարցնում եր վորեւ բան,  
նրա բառերը հնչում եյին թշնամաքար,  
խմբ քաղցր ձայնը կարծես լցում եր  
թույնով :

Այստեղ կանանց վրա ավելի թեթև ու կո-  
պիտ են նայում, քան Ռուսաստանում և,  
ալետք ե ասել, վոր մինչեւ վերջին ժամա-

նակներս իրենք խոալուհիներն եյին այդպի-  
սի վերաբերմունքի առփթ տալիս նրանք,  
բացի յեկեղեցուց, ուրիշ վոչ մի քանով չե-  
մին հետաքրքրուում։ Ծղամարդկանց կու-  
տուրական աշխատանքին նրանք նայում ե-  
մին խորթ աչքով ու չեյին հատկանում այդ-  
աշխատանքի նշանակությունը։

Պրոպագանդիստի առնական ինքնասիրու-  
թյունը տանջվում եր, վայլուն քարոզչի  
հմայքն ամեն անզամ վիրասվորվում այդ  
աշխատ հետ ունեցած ընդհարումներից։ Նա  
զայրանում եր, պրովայում։ մի քանի ան-  
գամ հաջող ծաղրում ե նրան, բայց աղ-  
ջիկն իր հերթին շեշտակի պատսախաններ  
եր տալիս, զրավում ողբուազանդիստի ա-  
կարտ հարդանքը և անուղղակի կերպով ըս-  
տիպում, վոր նա տվելի լուրջ պատրաստվի  
այդ իմբակի պարապմունքների համար։

Բայց պրոպագանդիստի աչքերից չի վրի-  
պում և այն, վոր ամեն անզամ յերբ ինքը  
խոսում եր մարդուն ճնշող, նրա մարմինն  
ու հոգին աղասիալող քատմնելի իրականու-  
թյան մասին ու նկարում աղասիս կյանքի  
պատկերը, ուր մարդը աղաս և լինելու

թե արտաքուստ և թե ներքուստ— այդ րո-  
պեներին աղջիկը նրա աչքում այլ գեմքով  
եր յերեսում— նա լսում եր զորեղ ու խե-  
լուք մարդու զայրույթով, մարդու, վորին  
ծանոթ և կյանքի շղթաների ծանրությու-  
նը, լսում եր ծարավ յերեխայի վատահու-  
թյամբ— կարծես նրա ականջին կախարդիչ  
հեքիաթ եր հնչում և այդ հեքիաթը նրան  
թվում եր վորակես դյութական արձագանք  
եր քարդ հողու։

Պրոպագանդիստը հուզմունքով նախա-  
զգում եր, վոր իր ուժեղ հակառակորդին  
պիտք և հաղթի, վոր այդ հակառակորդը  
հրաշալի ընկեր կարող ե լինել, ապագա  
կյանքի համար կիսվող անշախս դինվոր։

Այդ մրցումը շաբունակվում է գրեթե մի  
ամբողջ տարբեր բայց նրանք կարիք չեյին  
զգում իրար մոտենալ և վիճել առանձին։  
Վերջինին նա մոտենում է աղջկան։

— Սինյորինա, մշտական ընդդիմա-  
խոս, —ասում ե նա, —համաձայնեցեք, վոր  
մեր գործի հաջողության համար լավ կի-  
ներ, յեթե մենք մոտիկ ծանոթանայինք։

Աղջիկն ուրախությամբ ընդունում է նրա  
առաջարկությունը ու համարյալ առաջին  
խոսքից ակալում և նրանց պայքարը։ Աղ-  
ջիկը բորբոքված պաշտպանում է յեկեղե-  
ցին, վորը, նրա ասելով, միավե վայրն եւ,  
ուր մարդ կարող է հոգեալես հանդստա-  
նալ, ուր բարի Մադոննայի առաջ բոլոր  
հավասար են ու միաւախի խղճարի, չնայած  
իրենց հագուստների տարբերության. Իսկ  
պրոպագանդիստը պատասխանում է, վոր  
մարդկանց հարկավոր է վոչ թե հանդստու-  
թյուն, այլ կորիւ, վոր անկարելի յե քա-  
ղաքացիական հավասարություն ձեռք բե-  
րել, առանց տնտեսական բարիքների հա-  
վասար բաշխման և վոր Մադոննայի թի-  
կունքում կան թագնիւած մարդիկ, վորոնց  
համար ցանկալի յե, վոր մարդիկ լինեն  
թշվառ ու հիմար։

Նրաներ կրանելում եյին այդ վեճերով.  
ամեն մի նոր հանդիպում շարունակություն  
եր նույն անվերջ ու կրքոտ պայքարի և  
որեցոր պարզվում եր նրանց հավասարիք-  
ների որհատական հակառակությունը։

Պրոպագանդիստի համոզմունքով կյանքը

կորիւ և գիտություն տարածելու, լոնու-  
թյան ուժերը զրավելու և նրա խորհրդա-  
վոր եներգիան մարդու կամքին յենթար-  
կելու հսմար. այդ կորիւ պահանջում է,  
վոր բոլոր մարդիկ հավասար չափով լավ  
զինվեն. իսկ կորիւ վերջում մարդուն ըս-  
պասում է Մաքի ազատությունն ու հաղ-  
թանակը, Մաքի վոր բոլոր ուժերի մեջ  
առենահզորն է և միավե, վոր գործում և  
գիտակցաբար։

Իսկ աղջկա հավատով՝ կյանքը գանձադ  
ու տանջալից լինթացը է, ուր մարդն իր  
Միտքն անընդոնելի խոնարհությամբ զոհ  
է բերում այն կամքին, վորի որենքներն ու  
նպաստակները միայն քահանան գիտե։

Պրոպագանդիստը շվարած հարցնում է.

— Վոր արդակես է, ել ինչո՞ւ յեք հաճա-  
խում իմ զատափառություններին, ի՞նչ եք  
սպասում առցիալիզմից։

— Այո՛, յես գիտեմ, վոր մեղք եմ գոր-  
ծում և հակասում ինձ, — խոսափանում ե  
նա տիսուր, — բայց սիրում եմ ձեզ լսել և

յերաղել, վոր մարդկանց համար յերջանիլ  
որեր են գալու:

Նա շատ ել գեղեցիկ չեր, բարակ ու խե-  
լոք դեմք ուներ, խոշոր աչքեր. նրա հո-  
յացը և՛ հեղ եր ու դամբացկոտ, և՛ քըն-  
քույշ ու դաժան. նա աշխատում եր մե-  
տաքսի մանարանում, ապրում եր ծեր մոր,  
հաշմանդամ հոր և կլատակ քրոջ հետ-  
վերջինս սովորում եր արհեստակորաց  
դպրոցում: Յերբեմն նա ուրախ եր լինում-  
ե նրա ուրախությունը վոչ թե աղաղակող,  
այլ գրալիչ եր. նա սիրում եր յերաժշտու-  
թյուն ու հինալուրց յեկեղեցիներ. հիս-  
նում եր նիստների և առարկաների գեղեց-  
կությամբ:

Նայելով նրանց վրա՝ նա ասում եր.

— Ի՞նչ տարորինակ ե մտածել, վոր այս  
գեղեցիկ առարկաները մի ժամանակ կաֆէ-  
ված են յեղել մասնավոր մարդկանց տնե-  
րում և մեկ մարդ ե միայն իրավունք ու-  
նեցել ողավել նրանցից: Գեղեցիկը պետք է  
տեսնեն բոլորը, գեղեցիկի կյանքը դրա մե-  
ջըն ե:

Հաճախ նա խոսում եր չափաղանց աս-

42

րութինակ և սլրողագանդիստին թվում եր,  
թե այդ բառերը բախում են նրա հոգու  
անիմանալի ձեղքերից. այդ բառերը վիրա-  
վորի հասաչանքների ելին նման: Նա ըղ-  
դում եր, վոր աղջիկը սիրում է կյանքն ու  
մարդկանց խորը հուզմունքով ու կարեկ-  
ցությամբ լի մի մոր սիրով. նա համբերու-  
թյամբ ապասում եր, վոր իր հավատը կը-  
րոբրոք աղջկան ու նրա լուս սերը կիսո-  
խարինե կրքի: Նրան թվում եր, վոր աղ-  
ջիկը հետզհետե ակսում ե լսել իրեն ավելի  
խոր ուշադրությամբ, վոր սրտումը նա ար-  
դեն համաձայն է իր հետ: Ու ել ավելի վո-  
ղենվորված՝ նա նորից մկանում եր փոսել  
դրական, հարատե կիսվի անհրաժեշտու-  
թյան մասին, կոմի, վոր մզվում և հանուն  
մարդու, ժողովրդի, մարդկության աղատա-  
զըության հին զղթաներից, վորոնց ժանդը  
հորդիների մեջ և թափանցել և մթագնել,  
թունավորել նրանց:

Մի անգամ աղջկան տուն ճանապարհելու  
ժամանակի, պրոպագանդիստն ասում է,  
վոր սիրում է նրան և ցանկանում է նրա  
հետ ամուսնանալ, ասում է ու սարսա-

Փում իր առաջարկության թողած տպալու-  
րությունից : Աղջիկը ցնցվում ե՝ կարծես  
մի ծանր հարվածից . աչքերը լայն բացած ,  
գունաթափ , նա հենվում է պատին , ձեռ-  
քերը թագնում ու պրոպագանդիստի յե-  
րեսին նայելով , ասում , հսմարյա թե սար-  
սափով .

— Յես գուշակում , յես զգում եյի այդ ,  
վորովհետեւ ինքս վաղուց սիրում եմ ձեզ .  
բայց . . Ասովա՞ծ իմ , այժմ ի՞նչ կլինի :

— Կոկսվեն մեր յերջանկության և ընդ-  
հանուր աշխատանքի որերը , բացականչում  
ե նա :

— Վո՞չ , ասում ե աղջիկը , գլուխը կա-  
խելով — , վո՞չ , սիրո մասին մենք չպիտի  
խոսենք :

— Ինչո՞ւ :

— Կհամաճայնե՞ս յեկեղեցում պսակիլ-  
լու , — կամաց հարցնում ե աղջիկը :

— Վոչ . . .

— Վոր այդպիս ե մնաք բարե ,  
Աղջիկը շուապ հեռանում է :

Պրոպագանդիստը վազում ե աղջիկա յե-

տելից ու ակսում համոզել , նա լուս լսում  
է նրան , ապա ասում .

— Յես , իմ մայրն ու հայրս , հայտա-  
ցող մարդկի ենք և այդպիս ել կմեռնենք :  
Քաղաքացիական ամուսնությունը , իմ  
կարծիքով , ամուսնություն չե : Այդ ա-  
մուսնությունից ծնվածները , յես դիտեմ ,  
գիրախտ կլինեն : Միայն յեկեղեցական ա-  
մուսնությունն ե սրբագործում սերը , մի-  
այն այն կարող ե յերջանկություն և հա-  
դիսու պարզել ինձ . . .

Պրոպագանդիստը զգում է , վոր աղջիկը  
չուտ չի զիջի , իսկ ինքը ի հարկե , զիջել  
չեր կարող : Նրանք բաժանվում են : Վերջե  
րոող յին աղջիկն ասում է .

— Ինչո՞ւ յենք տանջում մեկմեկու , աշ-  
խատիր չպատահել ինձ հետ :

— Վոչինչ չեմ խոստանում , պատահիստ-  
ում ե պրոպագանդիստը :

Ու ակսում ե այդ յերկու ուժեղ մարդ-  
կանց կռիվը :

Ի հարկե , նրանք պատահում եյին և ա-  
վելի հաճախ , քան առաջ . տեսնում եյին ,

զորովհետեւ սիրում, փնտում ելին մեկ-  
մեկու, հավատալով, վոր իրենցից մեկն,  
անկարող այլեւ, կղիջի ծարավ ու հետըզ-  
հետեւ բորբոքվող զգացմանը։ Այդ հանդի-  
պումները լի ելին հուսահատությամբ և  
վշտով։ ամեն հանդիսպումից հետո պրոպա-  
գանդիստն իրեն զգում եր ջարդված և  
ուժասպառ, իսկ աղջիկը, արցունքներն աշ-  
քերին, յեկեղեցի յեր գնում խառավանե-  
ցու։

Պրոպագանդիստը գիտեր այդ, ի հարկեն,  
և զգում եր, վոր իր և աղջկա մեջ բարձ-  
րանում և Փարաջալոր մարդկանց սև պա-  
տը, վորը հետզհետեւ աճում ե, ամբանում,  
դառնում անվործանելի և իրենց ցմահ բա-  
ժանում։

Մի տոն որ, դաշտում, քաղաքից դուրս,  
նրանք զբունում ելին։ Պրոպագանդիստը,  
կարծես ինքն իրեն բարձրածայն մտածե-  
լով, անանց իլիտալորությունը ունենայու  
նրան սպանալու առում ե.

— Գիտես, յերբեմն ինձ թվում ե, իւ  
կարող եմ քեզ սպանել...

Աղջիկը չի խսում.

— Լսեցի՞ր, ինչ ասացի...

Աղջիկը մի քնքույց հայացք և գցում նրա  
վրա ու պատասխանում։

— Եյ՛:

Պրոպագանդիստը պարզ հասկացավ, վոր  
աղջիկը կմեռնի, բայց չի զիջի։ Մինչ այդ  
«այո»-ն, նա յերբեմն զրկում ու համբու-  
րում եր աղջկան, վորը դիմաղրում եր  
նրան, բայց նրա համառությունը հետզհե-  
տեւ թուլանում եր։ Պրոպագանդիստը արդեն  
յերազում եր այն մասին, վոր մի որ աղ-  
ջիկը անձնանուր կլինի իրեն և հետո ար-  
դեն կանացի բնազդի ողնությամբ՝ կհաղ-  
թի նրան։ Խոնկ այժմ նա հասկացավ, վոր  
այդ հաղթություն չի լինի, այլ բռնադա-  
տումն, և այդ պահից նա դադարեց դրդը-  
ռել նրա մեջ կինը։

Այդպես նա քայլում եր աղջկա հետ նրա  
կյանքի պատվերացուամների ու շրջանում,  
վառում եր նրա առաջ բաղմաթիվ ջահեր,  
բայց աղջիկը՝ յերազող ժպիտն աչքերին,  
լսում եր պրոպագանդիստին՝ ինչպես կույր  
ու վոչինչ չեր տեսնում, չեր հավատուժ  
նրան։

Մի անդամ աղջիկն ասում է:

— Յերբեմն յես համանում եմ, վոր քո ասածները կիրականանան, բայց դպում եմ, վոր այդ ասածնում ե իմ սիրուց գեղալի քեզ, ըմբռնում եմ ասածներդ, բայց չեմ կարողանում հավատալ. իսկ յերբ դու հեռանում ես— այն բոլորը, ինչ վոր քոնն ե, քեզ հետ հեռանում ե:

Այդ դրաման տեսում ե մոտ յերիու տարի: Բայց ահա աղջկա ուժերն սպասվում են և նա հիմանդրանում է: Պրոպագանդիստը թողնում է իր արհեստը, դադարում ե սկարապել մինչև անդամ կազմակերպության գործերով, պարտքի տակ և բնկնում ու խուսափում ընկերներից: Ամբողջ որերով նա թափառում եր աղջկա բնակարանի շուրջը-կամ նրա մահճակալի մոտ նստած նայում եր որեցոր հարվող հիմանդին, վորն ալոդեն թափանցիկ եր դարձել: Հիմանդության կրակը պլազմում եր նրա աչքերում:

— Եսուիր վյանքի, ապաբայի մատին,— ինդրում ե աղջիկը:

Պրոպագանդիստը ակսում ե խոսել ներկայի մասին ու վրեժիսորդությամբ թվում և այն բոլորը, ինչ աղանում են կյանքը— ասում, վոր այդ բոլորի գեմ անդուլ կը-սիլ պետք ե մզել ու կյանքից դուրս չը-մըրտել, ինչպես մութ, կեղաստ ու մաշ-շած փալասներ:

Աղջիկը լսում եր նրան, բայց յերբ ըզ-դում եր, վոր ցավերը բորբոքվում են, նա խնդրում եր, վոր լոի. շոյում եր նրա ձեռքերն ու աղերսալից հայացքով նայում նրա աչքերին:

— Յես մեռնո՞ւմ եմ, մի անդամ հարց-քեց նա: Դրանից շատ որեր առաջ քժիշկն արդեն ասել եր պրոպագանդիստին, վոր աղջկա հիվանդությունը արագընթաց թուքախոտ ե և դրությունը անհուսալի:

Պրոպագանդիստը աչքերը կախեց ու չը-պատասխանեց:

— Դիտեմ, շուտով պիտի մեռնեմ, — ա-սաց հիվանդը, — տուր ինձ ձեռքդ:

Յեզ յերբ նա ձեռքը մեկնեց, աղջիկը կրակոտ շրթունքներով համբուրեց այն ու ասաց:

— Ներիր, յես մեղալոր եմ քո առաջ,  
յես սխալված եմ և զուր քեզ տանջել եմ :  
Այժմ, յերբ արդեն սպանված եմ, տեսնում  
եմ, վոր իմ հավատը միայն յերկյուղ եր  
այն բոլորի համբեալ, ինչ յես չեյի կարու-  
ղանում հավանակ, հակառակ իմ ցանկու-  
թյան և քո թափած չանքերին :

Այս, յերկյուղ եր այն, բայց, ավագ  
արյանս հետ խառնված. յես ծնվել եմ նրա  
հետ միասին: Խելքս իմն եռ կամ քոնը—  
բայց սիրոս ոտար եր, գիտեյի, վոր դու  
իրավացի յես—բայց սիրոս չեր կարողա-  
նում համաձայնել:

Մի քանի որից աղջիկը մեռնում է: Քը-  
սանյոթ տարեկան ալրազարդիստը իր  
սիրելիի տաղնալի որերից դուրս յեկալ  
ձերմակած մաղերով:

Վերջին ժամանակներս նու ամուսնացել  
ե իր աշակերտուհու հետ, վորը այն աղջ-  
կու միակ ընկերութին եր:

Ամեն կիրակի նրանք գնում են գերեզ-  
մանառուն՝ աղջկա գերեզմանի վրա ծա-  
զիներ դնելու, այժմ ել նրանք այնուել  
են դնում:

Պրոպագանդիստը չի հավատում իր հաղ-  
թությանը. նա գիտե, վոր յերբ աղջկեն  
ասաց—դու իրավացի ես՝ խարում եր, վոր  
իրեն միրիթարի:

Նրա կինն ել ե այդպես կարծում: Նը-  
րանք սիրով պաշտում են նրա հիշատակը:  
Այդ գեղեցիկ մարդու կորսույան տիսուր  
պատմությունը դրդում է նրանց ուժե-  
րը, վոր վրեժինդիր լինեն նրա համար.  
աղջկա հիշատակը նրանց համերաշին ու  
անդուր կովին տալիս ե ինքնատիպ ու  
լայն, գեղեցիկ քնույթ:

Արեի տակ հոսում եր աշխույժ, տոնա-  
կան ու յարմերանդ մարդկանց գետը. ու-  
րախ աղմուկը ձայնակցում եր հոսանքին,  
յերեխաները կչկչում եյին, ծիծաղում:  
Ի հարկե, բռլոր մարդիկ անխույզ և ու-  
րախ չեյին, հավանորեն շատերի սրտերը  
խավար թափիծից ճնշված եյին, շատերի  
մտքերը հավասություններից տանջված...  
Բայց մենք բոլորս քայլում ենք գեպի ա-  
ղատություն, գեղի աղատություն:

Լինենք համերաշին—մեր ընթացքը կա-  
րագանա:

### III. ՀԵՔԻԱՅԹ

Նեապոլ քթղաքռում արամվայի ծառա-  
յողների գործադուլ եր : Ի կիլեր Քիես  
փողոցի ամբողջ յերկարությամբ ձգված  
եր դատարկ վաղոնների չզիտա , իսկ Հաղ-  
թության հրապարակում խոնվել եր վա-  
գոնավարների ու կոնդուսկոտրների ամբո-  
խը — միշտ ուրախ , աղմիարար և անդիկի  
պես դյուրաշարժ նեապոլցիների ամբոխը :

Նրանց գլխավերը , այդու ցանկապատի  
մյուս կողմում շատրվանի բարակ շիթը  
փայլում եր սրի նման : Գործաթողները  
շրջապատված երին թշնամաբար տրամա-  
դրված բազմությամբ . մարդիկ կարիք ու-  
նելին գնալու ահարդին քաղաքի դանական  
կողմերը և ամենքը՝ գործակատարներ ,  
արհեստավորներ , խանութեալաններ ու փար  
անող կանայք — ամենքը զայրացած ու

գուգուալով նախատում ելին գործաթող-  
ներին : Լավում ելին ցասկոտ խոսքեր ,  
ծաղրանք և ողի մեջ անընդհատ շարժվում  
ելին նեապոլցու ձեռքերը , վորոնց միջո-  
ցով նա խոսում է նույնքան ալբանակայտիչ  
ու պերճ , վորքան և իր անդադրում լեղ-  
վով :

Ծովից մեղմ քամի յե փչում ու որո-  
րում քաղաքային այգու արմավենիների  
մուլ — կանաչ կատարները : Զարմանք  
բան . այդ արմավենիների բներն ամենի  
վողերի վոտների ելին նմանում ու կարծես  
քարեց լինելին տաշած : Նեապոլի փողոցի  
կիսամերիլ յերեխաները ճնճղուկի նման  
թռչուտում ելին ու ողը լցնում հնչում  
աղմուկ—ծիծաղով :

Վաղեմի քանդակների նմանող քաղաքն  
այդ սպահուն վողողված եր կիոպիչ արևի ա-  
ռաստ ճառագայթներով ու յերգում եր , ա-  
սես հսկայական յերդեհոն լիներ : Ծովա-  
խորչի կատույտ այլքներոյ համերաշխ  
զարնում ելին տիկի քարերին ու խուլ հար-  
գածներով ձայնակցում ամբոխի աղմու-  
կին , կարծես դահիրակ յեր թնդում :

Գործաթողները, չներով զրջադատված  
գայլերի վոհմակին նման, հոգնած սեղմը-  
վել ելին մեկ-մեկու ու ամբոխի պատճա-  
միքներին գործե չելին պատասխանում, մի-  
այն նրանք յերեմն-յերեմն բարձրանում  
ելին արդու ցանկալատի վրա ու մարդ-  
կանց գլուխների վրայից անհանգստորեն  
նայում դեպի մոտակա փողոցները։ Ա-  
մենքի համար պարզ եր, վոր այդ միատա-  
րակ մարդիկ կուռ միացած են իրենց ան-  
սատան վորոշումովն ու չեն զիջեւ։ Այդ  
հանգամանքն ամբոխին գրգռում եր ավե-  
լի ևս։ Բայց ամբոխի մեջ փելիսոփիաներ  
ել կային։ Հանդարտորեն ծխելով՝ նրանք  
խրատում ելին գործաթողների տաքացած  
հակառակորդներին։

— Եյ, սինեոր, ի՞նչ անեն խելձ մար-  
դիկ, յերբ յերեխաների համար մակարոն  
անդամ գնելու փող չունեն։  
Քաղաքային վոստիկանության պահանով  
գործակալները յերկու-յերեք հոգուց կաղմ-  
ված խմբակներով հետեւում ելին, վոր  
ամբոխը կառքերի յերթեւեկությունը չը-  
խանգարի։ Նրանք խիստ չեղոքություն

ելին պահպանում ու հավասար աչքով նա-  
յում դատապարտողների վրա, յերբեմն ել  
բարեհոգությամբ ծաղրում ելին, յերբ  
նրանց աղմուկն ու ձեռքերի շարժումները  
տաքանում ելին չափազանց։ Մոտակա նեղ  
փողոցի տների պատերի տակ շարված ե-  
լին մի վաշտ կարաքեներներ՝ զինված  
կարձ ու թեթեվ հրացաններով։ Նրանք  
դրված ելին լուրջ ընդհարումների առաջն  
առնելու համար։ Այդ դինվորները բավա-  
կան չարագուչմի տեսք ունելին։ Նրանք  
ծածկած ելին յեռանկյունի գլխարկներ և  
հագած կարձ ու սև պատմուճաններ, իսկ  
բրյուկների կարմիր լուրջպասները փայլում  
ելին արյան պես։

Փոխագարձ հայէոյանքներից, ծաղրը,  
կշտամբանքներն ու հորդորանքը հանկարծ  
գաղարեցին։ ամբոխի վրայից անցավ մի  
նոր, մարդկանց հաշտեցնող հոսանք։ Գոր-  
ծաթողների գեմքերը մուայլվեցին ավելի  
ևս։ Նրանք սեղմվեցին մեկ-մեկու։ Իսկ  
ամբոխի միջից լուրջը ձայներ։

— Զինվորները . . .

Գործաթողների դեմ բարձրացան ծաղր

ու հաղթանակ՝ արտահայտող սուլոցներ, և վողջույնի ձայներ՝ զինվորների հասցեալին. իսկ մէկը՝ բարակ, մոխրագույն հագուստով ու պանամա ծածկած մի դեր մարդ, վոտները դանդաղ-դանդաղ շարժեւով սկսեց պարել մայթի վրա: Եսայլ կոնդրավորներն ու վագոնավարները ճեղքելով ամբոխը՝ մոտեցան վագոններին. նրանցից մի քանի հոգի բարձրացան վագոնները և իրենց տեղերը բանեցին: Խուժանի սպառնալիքներին նրանք պատասխանում ելին ծանր վշտամբաներով ու ստիպում, վոր ճամբար տան անցնելու: Աղմուկը մի քիչ դադարեց: Գործաթուղներն անցնելով ամբոխի միջից՝ սպատառեցին, խմբակների բաժանեցին թշնամիաբար տրամադրված այդ բանակը ու կարծես վարակեցին մի նոր տրամադրությամբ, մարդկարյին, վո՞չ — թշնամական տրամադրությամբ:

Իսկ Սահսրա-լուչիայի ծովափից մոտենում ելին ցածրահասակ ու մոխրագույն զինվորները: Նրանք գալիս ելին թեթև ու պարող քայլերամ, համաշափ փառում ելին վոտներն ու միաստեսակ, մե-

քենայաբար շարժում ձմիս ձեռքերը: Զինվորները կարծես թիթեղյա լինելին ու վիրուն ելին, վորպես լարվող խաղալիքներ: Գեղեցիկ ու բարձրահասակ մի սպա՛հոնքերը կիսած ու դեմքն ատելությամբ ծամածուած՝ զեկավարում եր զինվորներին: Նրա մոտից վոստվոստալով քայլում եր ցիլինդրավոր մի գեր մարդ ձեռքերն ողիքեղ արագ-արագ շարժելով նա ինչ վորբան եր ասում սպալին:

Ամբոխը յետ քաշվեց վագոններից. զինվորները վոշու սիես ցրվեցին ու շարվեցին վագոնների մոտ. իսկ գործաթողները կանգնած ելին վագոնների մեջ: Ցիլինդրավոր գեր մարդը և նրա չուրջը հավաքված մի քանի ուրիշները ձեռքերը թափահարելով բարկացած աղաղակում ելին.

— Վերջին անգամ սուածարկում եմ, լրուսում եք:

Սպան ձանձրույթից գլուխը թեքել եր ու բեղերն եր վոլորում. նրան մոտեցալ մի մարդ, ցիլինդրը բարձր հանեց ու խլուսում ձայնով ինչ վոր բան ասաց: Սպանծուռ հայացք ձղեց նրա վրա, ուզգվեց,

Գուրծքը դուրս ցցեց ու բարձր Հնչեցին  
Հրամանի բառերը:

Այդ ժամանակ յերկու-յերեք դինզոր  
Հարձակվեցին յուրաքանչյուր վագոնի վրա  
ու ակսեցին ցած նետել գործաթողներին:

Ամբոխին այդ ծիծաղելի թվաց լսվեցին  
աղաղակ, առևլոցներ, հրհոց, բայց այդ  
բոլորը չուտով դարձրեց. և մարդիկ լուր,  
վարաժամ ծերացած դեմքերը դուրս ցցած  
ու աչքերը զարմանքից չուած՝ ծանր-ծանր  
յետ քաշվեցին վագոններից ու ամբողջ  
մասսայով շարժվեցին վեպի առաջին վա-  
գոնը:

Յեկ տեսան, վոր վագոնի անիշների ա-  
ռաջ ոելսերի վրա պառկել է մի վաղոնա-  
վար: Զինվորի դեմք ուներ նա. դը-  
խարկը հանած ալեզոր դլիք, նա պառ-  
կած եր կուրծքը դեպի վեր, իսկ բեղերը  
խրխտ կերպով դեպի յերկինք ելին ցցվեւ:  
Նրա մոտ դետնին սփովեց մի ուրիշը, վոր-  
քիկ կապկի նման ճարպիկ մի յերիտա-  
սարդ: Ասպա մեկը մյուսի յետեվից անըշ-  
տաստ կերպով սկսեցին դետին թափուլ և  
ուրիշները:

Ամբոխը խուլ աղմկում եր, յերկչոտները  
Մաղոնայի (տիրամոր) ողնությունն ելին  
հայցում. վոմանք մոայլ հայհոյում, ծը-  
զըրտում ելին, կանայք հառաչում: Տե-  
սարանիցը դայլացած փողոցի տղաները  
աջ ու ձախ վոստիոստում ելին. ոետինն  
պնդակների նման:

Ցիկնդրավոր մարդը արտասունքն աչ-  
քերին ինչ վոր բան եր աղաղակում. սպան  
նայեց նրա վրա և ուսերը վեր քաշեց. նա  
իրավունք ուներ վագոնների փոխա-  
րեն զինվորներ վագոնները քշելու հա-  
մար, բայց գործաթողերի դեմ կոմիլու  
հրաման չեր ստացել:

Այն ժամանակի ցիկնդրավորը ըջա-  
պատված մի քանի հանճոյակատար մարդ-  
կանցով, վաղեց զեպի կարաբիներների կող-  
մը. կարաբիներներին ահա շարժվեցին, մո-  
տենում են, կոսացան ոելսերին պառկած-  
ների վրա և նրանց բարձրացնե ևն ու-  
ղում:

Ակավեց կոխի, իրարանցում, բայց ահա,  
այդ տեսարանը հեռվից դիտող մոխրա-  
գույն ու փոշոտ ամբոխը շարժվեց, վո-

նաց, մոնէլուն արձակեց, ու գրոհ տվարի  
դեսի ռելսերը. պահամած ծածկած մարդը  
դիմարկը հանեց, չպրտեց ողի մեջ ու ա-  
ռաջինը պառկեց մի գործաթողի մոտ,  
կամացումի խփեց նրա մեջքին ու բարձր  
աղաղակեռվ սկսեց խրախուսել:

Նրա յետեվից ռելսերի վրա պիսեցին  
թափվել ուրիշները. բոլոր վոտները կար-  
ծես մեկեն կտրվեցին: Այդ աշխույժ ու  
աղմկալից մարդիկ, վոր յերկու բոսե ա-  
ռաջ լուս դիտող եյին միայն, այժմ ու-  
րախ - ուրախ գետին եյին թափվում,  
մերմեկու ողեմ բերան ծոռում ու գոռում  
դեպի սպան, վորը ձեռնոցները շարժելով  
ցլինդրով մարդու քթի առաջ, խոսում եր  
ինչ վոր բանի մասին, քմծիծաղ տալիս ու  
կեղեցիլ պլուխն որորում:

Իսկ ռելսերի վրա մարդիկ դեռ թափ-  
վում եյին ու թափվում. կանայք իրենց  
դամբյուղներն ու կառպոցներն եյին չպըր-  
տում, յերեխաները ծիծաղելով պառկում  
եյին ու սառած չների նման կալաչաձե  
կուչ գալիս. վայելուչ հազնված մարդիկ

ընկնում եյին այս ու այն կողքի վրա ու  
փոշոտվում:

Առաջին վագոնից հինգ զինվոր նայում  
եյին ներքեւ անփնտերի առաջ թափված  
մարմինների կույսերի վրա և հրհնում,  
որորվում եյին՝ վագոնի ճաղերից բռնած.  
Ծիծաղելու ժամանակ նրանք յետ ու առաջ  
եյին ձգում գլուխները. այժմ նրանք բո-  
լորվուն նման չեյին թիթեղյա լարվող խա-  
ղալիքների:

...Կես ժամից հետո ամբողջ նեապո-  
լում ճիչ ու ճրճուց բարձրացած սլանում  
եյին տրամփայի վագոնները՝ հաղթական  
գործաթողներն ուրախ ու ժպտուն զեմ-  
քով կանգնած եյին իրենց տեղերում:

Վագոնի մեջ քայլելով նրանք քաղաքա-  
վարի կերպով հարցնում եյին:

— Զեր տոմսակը...

Մարդիկ ցույց եյին տալիս կարմիր ու  
զեղին թղթիկներ. աչքով եյին անում,  
ժպտում, բարեհոգի կերպով փնթփրն-  
թում ...:

## IV. ՀԵՒԻԱՅ

Հին, հաստաբուն խաղողենիների մէջ  
թագնված վաճառատան դրհերի առաջ,  
խաղողաթուփերի, շերեփուկի յել չինա-  
կան մանր վարդերի ցանցապատ ծածկոցի  
հովանու տակ, սեղանի մոտ, գինու շիշը  
առաջներին, նուտած եյին վինչենցո ներ-  
կարարը յել Զիովաննի վականապործը:  
Ներկարարը փոքրիկ եր, վոսկիրոտ ու սեկ,  
նրա թուխ աչքերում վայլում եր լերազո-  
ղի մտածկոտ ու մեղմ ժպիտը. թեև նրա  
վերին չրթունքը յել այտերը ստիրինելուց  
կապտել եյին — այդ ժպիտը նրա դեմքին  
տարիո եր մանկական ու միամիտ արտա-  
չայտություն: Բերանը փոքրիկ եր, կահա-  
ցի բերանի նման յել ձեռքի դաստակները  
յերկայն: Նա իր աշխատված մատնելով խա-  
ղացնում եր վարդի գեղեցիկ ծաղիկը յել

սեղմելով այն իր չրթունքներին, փակում  
եր աչքերը:

— Կարող ե պատահել, — յես չդիտեմ—  
կարող ե պատահել, — հանդարտ ասում  
եր նա, չարժելով քունքերի մոտ սեղմված  
դլուխը, վորից շիկագույն դանգուրները  
թափնում եյին նրա բարձր ճակատին:

— Այ՛, այ՛, քանի դեպի հյուախս,  
այնքան հաստատակամ են մարդիկ—պըն-  
դում եր մեծազլուխ, լայնաթիկունք, սեկ  
զանգուրներով Զիովաննին. նրա դեմքը  
պղնձագույն եր, քիթն արեւու և ծածկի-  
ված թափնող մորթու սպիտակ թեփերով,  
աչքերը մեծ եյին ու բարի, յեղան աչքե-  
րի պես ու ձախ ձեռքին պակասում եր մեծ  
մատր:

Նրա զբուցը դանդաղ եր, վորպես իր  
յուղակալած և յերկաթե վոշով ծածկված  
ձեռքերի շարժումները: Գինու բաժակը իր  
կոտրումած յեղունդներով մատների մեջ  
սեղմած, նա չարունակում եր իր հաստ  
ձայնով:

— Միւան, թուրին — ահա այն դերա-  
զանց գործարանները, վորտեղ ձեկակերպ-

վում են նոր մարդիկ, աճում ե նոր միտքը: Մի փոքր ել սպասիր — աշխարհը կը խելքանա: ու կաղնվանա:

— Այո՛, — ասում է փոքրիկ ներկարարը, բարձրացնելով բաժակը և դիմու մեջ վորսալով արեմի ճարագայթը — յերգում ե՝

— Ո՛, ինչ չերմ ե յերկիրը մեր որերի առավոտին,

Բայց — առնացել ենք մենք — և ցուրտ ե նրա վրա

— Վորքան դեպի հյուսիս, ասում եմ յիս, այնքան լավ ե գործը: Այ հենց ֆըրանսիացիք այնպես ծույլ չեն ապրում, վորսիս մենք, այնուհետեւ դերմանացիք և վերջապես ոռւսները — ա՛յ քեզ մարդիկ:

— Իրավագուրիկ, աղասությունից յեվ կյանքից զրկվելու յերկյուղից, նրանք հըսկայական գործ կատարեցին. չե՞ վոր նրանց շնորհիլ եր, վոր արժնացավ նոր կյանքի համար վողջ արեվելքը:

— Հերոսների աշխարհ՝ զլուխը թափահարելով ասաց ներկարարը — յես կուզեյի նրանց հետ ամլուել...

— Դո՞ւ — բացականչեց փականադործը,

ձեռքը ծնկանը դարձելով, — մի շաբաթից հետո սպուցի մի կտոր դարձած կլինեյիր դու այնտեղ:

Յերկուսն ել բարեհոգությամբ ծիծաղեցին:

Նրանց շուրջը վուված եյին կապույտ և վոսկեգույն ծաղիկները. ողի մեջ դոդուցում եյին արեկ ճառագայթների ժապավենները, թափանցիկ ամանի ու բաժակների մեջ վառվում եր ալմանդինի դինին, հեռվից լողալով մոտենում եր ծովի մետաքսյա խշոցը:

— Իմ բարի վիճէնցու, — ասաց փականադործը լայն ժպտալով — ա՛յ դու բանաստեղծորեն սպասմիր, թե ինչպես յե՛ս սոցիալիստ դարձա — դու դիտե՞ս այդ:

— Վո՞չ, — ասաց ներկարարը բաժակները լցնելով և կարծես ժպտալով կարմիր հեղուկին — դու յերբեք չես սպասմել ինձ: Այդ մորթին այնքան սազում ե քո վոսկորներին, վոր յես կարծում եյի, թե դու դու մեջ ել ծնմել ես:

— Յես ծնմել եմ մերկ ու հիմար, ինչպես և դու ու բոլոր մարդիկ: Պատանի

Հաստակիում յես յերազում ելի հարուստ կը-  
նոջ մասին, զինվոր ժամանակս պատ-  
րաստվում ելի քննության՝ ապայի աստի-  
ճան աստանալու համար: Այնուհետեւ քը-  
անաներեք տարեկան ելի, յերբ զդացի,  
վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ այնքան  
ել լավ չե և հիմար մնալը — ամոթ ե:

Եելիաբարը հենվեց սեղանին և գլուխը  
վեր բարձրացնելով, տկնեց նայել դեպի  
մոտակա ապրը, մորի հենց գառաթին  
կանդած որորվում ելին վիթխարի յե-  
ղեղները:

— Մեզ, մեր վաշտը ուղարկեցին Բոլո-  
նիա, — այնուեղի գյուղացիները ապշտ-  
տամբվել ելին՝ սլահանջելով վոմանք կա-  
պալպէնի կրծատում, մյուսները գոռում  
ելին աշխատավարձի ավելացման մասին:  
Ինձ թվում եր թե մեկը և թե մյուս-  
ները անիրավացի ելին: Ինչ հիմարու-  
թյուն — մտածում ելի յես: Զե վոր գա  
կբայքայեր հողատերերին: Ինձ, քաղաքիս  
քնակչին այդ բանը անմիտ ու անհեթե՛  
եր թվում: Յես շատ ելի բարկանում, վո-  
րին նպաստում եր շոգը, մշտական տեղա-

փոխությունները մի տեղից մյուսը և ան-  
դադար գիշերապահությունները: Այդ  
քաջերը, հասկանում ես, կոտրատում ելին  
կանչածատերերի մեքենաները, նաև շատ  
սիրում ելին: այրել հացը և վոչնչացնել  
այն ամենը, ինչ վոր իրենց չեր պատկա-  
նում:

Նա փոքրիկ կումերով խմեց դիմին և ա-  
վելի կենդանացած, շարունակեց:

— Նրանք մեծ խմբերով շրջում ելին  
գալատերում, մորուկն վոչխարներ, բայց  
լուս, գոռող և բանիմաց: Մենք նրանց  
ցրում ելինք, ցույց տալով մեր ալիննե-  
րը ու յերբեմն ել հրելով նրանց հրացանի  
կոթերով: Նրանք ցրվում ելին առանց  
վախենալու և առանց շտապելու ու հետո  
կրկին հավաքվում: Այդ բոլորը տաղտկա-  
լի յեր վորպես յերկար ժամերգությունը  
ու կրկնվում եր որ որի վրա, տեսդի նը-  
ման: Լուսուն — մեր յենթասպան, մի  
շատ լավ յերիտասարդ, ինքը դյուղացի—  
հետղհետե մոայլվում եր. նա դեղնել եր,  
նիհարել և շատ անգամ ասում եր մեզ.

— Շատ վատ ե, վորդիքս, շատ վատ ե,

յերեկ ստիպված կլինենք հրազեն պարպել,  
անիծված լինեմ յես :

Այդ կըսկըսողը, ի չարկե, մեղ ամե-  
լի յեր վրդովում : Բացի այդ, տես վոր,  
ամեն մի անլիունում, ամեն մի բլուրի ու  
ծառի հետևից անիված եյին գյուղացինե-  
րի համառ գլուխները, նրանց բարկացած  
աչքերը մեղ եյին վորում : Նրանք ի հար-  
կե այնքան ել սիրալիր չեյին տրամադրո-  
ված գեղի մեղ :

— Եմի՛ր, — ասաց փոքրիկ վինչենցոն,  
գինու կաժակը յիալուքաբար մոտեցնե-  
լով իր բարեկամին :

— Շնորհակալ եմ . Կեցցեն տոկուն մար-  
դիկ, — իր հաստ ձայնով բացականչեց փա-  
կանագործը, խմեց ու ձեռքի ափով մաք-  
րելով բեխերը, շարունակեց :

— Մի անգամ յես մի բլուրի վրա, ձի-  
թենու ալուրակի մոտ կանոնած, պահպա-  
նում եյի ծառերը — լորավհետեւ գյուղա-  
ցիները փչացնում եյին նրանց, իսկ բլու-  
րի ներքենում աշխատում եյին յերկու  
գյուղացի՝ մի ծերով և մի պատանի-  
նու վոր առու եյին վորում : Շոդ եր Կ

արեւ կրտակի նման այրում եր : Ինձ պա-  
տել եր ձուկ դառնալու ցանկությունը .  
տաղտկալի յեր և յես, հիշում եմ, նայում  
եյի այդ գյուղացիներին շատ բարկացած :  
Կեսորին նրանք ձեղելով աշխատանքը, հա-  
նեցին հաց, պանիր և գինու կուժը : Գրո-  
ղը տանի ձեղ — մոտածում եյի յես : Հան-  
կարծ ծերուկը, վոր մինչև այդ վոչ մի  
անդամ չեր նայել ինձ վրա, ինչ վոր բան  
ասաց պատանում : Պատանին բացասարար  
թարվահարեց գլուխը, բայց ծերուկը դո-  
ւաց .

— Գնա՛, — շատ խիստ գոռաց :

Պատանին գինու կուժը ձեռքին մոտեցավ  
ինձ և, վոչ այնքան ել հոժարակամ ա-  
սաց .

— Հայրս կարծում ե, վոր դուք խմելու  
ցանկություն ունեք և ասաջարկում ե ձեզ  
գինի :

Անհարմար եր, թեև դուրեկան, յես հը-  
րաժարավեցի և գլխի շարժումով շնորհա-  
կալություն հայտնեցի ծերունուն, բայց

ծերունեն յերկնքին նայելով, պատճառիսա-  
նեց.

— Խմեցեք, պարո՞ն, խմեցեք: Մենք ա-  
ռաջարկում ենք այդ իբրև մարդու և վոչ  
զինվորի ու հույս չունենք, վոր զինվորը  
մեր դինուց ավելի բարի կդառնա:

— Մի խայթիր, գըողը տանի քեզ, մը-  
տածեցի յես և յերեք կում խմելով, չնոր-  
հակալություն հայտնեցի, իսկ այնուղ  
ներքեւում նրանք սկսեցին ուտել: Շուտով  
ինձ փոխարինեց սալերտինացի Ռուռն և  
յես նրան կամաց ասացի, վոր այդ յերկու  
գյուղացիները բարի մարդիկ են: Նույն  
որը, յերեկոյան, յերբ յես կանոնած եյի  
մեքենաների սրահի դռան առաջ, կտու-  
րից մի աղյուս ընկամ դլիսիս. այնքան ել  
չցավեցըեց, բայց յերկորդ աղյուսը այն-  
պիսի թափով դիմակ ուսիս, վոր ձախ  
թես թուլացավ:

Փականագործը բերանը լայն բացելով  
ու աչքերը կկոցելով բարձր ծիծաղեց:

— Աղյուսները, քարերն ու փայտերր—  
շարունակեց նա ծիծաղելով— այն որերին  
այնտեղ գործում եյին Վնքնուրույնաբար

և պետք ե ասել, վոր անշունչ առարկա-  
ների այդ ինքնուրույնությունից, բամա-  
կան մեծ մեծ ուռուցքներ եյին առաջա-  
նում մեր դլուկիների վրա: Ահա կանգնած  
ե, կամ քայլում ե զինվորը. մեկ ել վայ-  
տի մի կտոր, կարծես գետնից բուսելով  
դիպչում ե նրան, կամ ասես յերկնքից մի  
քարի նկոր ընկնում ե նրա գլխին: Մենք  
ի հարկե սաստիկ բարկանում եյինք:

Փոքրիկ ներկարարի աչքերը թախիծով  
լցվել եյին, դեմքը գունատվել եր, ու նա  
մեղմ առաց:

— Միշտ այդպիսի բաներ լսելիս, մարդ  
ամաչում ե...

— Ի՞նչ կարող ես անել, մարդիկ դան-  
դաղությամբ են խելոքանում: Հետո, յես  
սպնություն կանչեցի, ինձ տարան մի  
տուն, վորտեղ պառկած եր յերեսը քարից  
վիրավորմած մի զինվոր: Յերբ յես հարց-  
րի թե ինչպես ե այդ պատահել, նա տր-  
իուր ծիծաղով պատասխանեց.

— Պառակը, ընկեր, պառակը. այն ծեր  
վշուկը քարով զարկեց վերեսիս և առա-  
ջարկեց իրան սպանել:

— Զերբարկալեցի՞ն:

— Յես սասացի, վոր ինքս եմ վայր ընկ-  
նելով վերավորվել: Հրամանաւատարը չհա-  
վատաց — այդ նկատվում եր նրա աչքե-  
րից, բայց համաձայնվիր, վոր անհարմար  
եր խռատվանվել թե վերավորվել ես մի  
պատմվից: Սատանան տանի, ի հարկե նը-  
րանց դրությունը դժվար ե — և հատկա-  
նալի յէ, վոր նրանք մեղ չեն սիրում:

— Այդ ձիշտ ե, մտածում եյի յես:  
Յեկավ բժիշկը յերկու կանանց հետ, նը-  
րանցից մեկը շատ գեղեցիկ եր, շիկահեր,  
ինչպես յերեսում եր վենետիկցի յեր,  
մյուսը — չեմ հիշում: Նայեցին ձեռքս,  
ի հարկե դատարկ բան եր, կոմպրես դրե-  
ցին ու դնացին:

Փականագործը մոայլվեց, բոեց և ա-  
մուր շփեց ձեռքերը: Նրա ընկերը նորից  
լցրեց բաժակները բարձր պահելով շիշը և  
դինու կարմիր և աշխույժ շիթը թոթուաց-  
նելով ողի մեջ:

— Մենք յերկուսս ել նստեցինք պատու-  
հանի մոտ — մոայլ շարունակեց փականա-

գործը — նստեցինք այնպես, վոր մեղ չը-  
տեսնի արել և ահա լում ենք այն շիկա-  
հեր զեղեցկուհու քնքույշ ձայնը — նա ըն-  
կերուհու և բժշկի հետ անցնում եր այդով  
պատուհանի մոտով և խոսում ֆրանսերեն  
լեզվով, վորը յես լավ հռականում եմ:

— Դուք նկատեցի՞ք նրա աչքերը — ա-  
սում եր նա — նա ել, ի հարկե նույնպես  
գյուղացի յէ և կարող ե պատահել, վոր  
զինազեստը հանեյուց հետո նա ել սո-  
ցիալիստ կրտսենա, ինչպես մեր բոլոր  
գյուղացիները: Յեկ ահա այլպիսի աչքե-  
րով մարդիկ ցանկանում են տիրել ամ-  
բողջ աշխարհը, վերափոխել ամբողջ կյան-  
քը, արտաքսել մեզ, մոչնչացնել և այդ  
ամենը միմիայն նրա համար, վորպեսզի  
հաղթանակե ինչ վոր մի կույր, տաղակա-  
լի արգարություն:

— Հիմար յերեխաներ — ասաց բժիշկը —  
կիսայերեխանելի, կիսագաղանելոր:

— Գաղաններ — այս, բայց ի՞նչն ե նը-  
րանց մեջ յերեխայական:

— Հապա այդ յերազները՝ ընդհանուր  
հակասալության մասին:

— Ո՛, ինչպես չե, յես հավասար եմ  
այդ յեղան աչքերով տղային, կամ այն  
մյուսին՝ թռչունի գեմքով, մենք բոլորս,  
դուք, յես և սա հավասար ենք այդ ու ա-  
բյուն տնեցող մարդկանց: Մարդկանց,  
վրոնց կարելի յե հրապիրել միմիայն նրա  
համար, վրապեսդի ջարդեն իրանց նման  
գողաններին:

Նա շատ եր խոսում և տաք տաք. իսկ  
յես լսում եյի և մտածում.

— Այդպե՞ս, տիկին: Յես նրան առաջին  
անգամը չեր, վոր տեսնում եյի և դու  
զիսես, անշուշտ, վոր վոչ վոք այնպես  
չերմ չերազում ինո՞չ մասին, վորքան  
զինվորը: Հասկանալի յե, վոր յես նրան  
յերեակայում եյի բարի, խելք, լավ  
սրտի տեր և բացի դրանեց այն ժամանակ  
ինձ թվում եր թե աղնվականները մի ա-  
ռանձին ինելքի տեր են: Հարցնում եմ ըն-  
կերպջու:

— Դու հասկանո՞ւմ ես այդ լեզուն:

Վո՞չ, նա չեր հասկանում: Այն ժամանակ  
յես թարգմանեցի նրան շիկահեր տիկնոջ  
խոսքերը— նա բարկացամ, վերպեր ցատ-

կեց, փայլեցրեց մեկ աչքը—մյուսը կապած  
եր:

— Ահա թե ի՞նչ— վինթինթում եր  
նա— ահա թե ի՞նչ, նա ինձնից ողտվում  
է և միւնույն ժամանակի ինձ մարդ չի հա-  
մարում: Յես նրա պատճառով թույլ եմ  
տալիս անսլատվել իմ արժանապատվու-  
թյունը, իսկ նա բացասում է այդ արժա-  
նապատվությունը, նրա սեփականությու-  
նը պահպանելու համար յես պատրաստ եմ  
հոգիս կորցնել...

Նա հիմար տղա չեր և իրեն խորը  
վիրավորված եր զգում. յես— նույնպես:  
Հետեւալ որը յես և ընկերս այդ տիկնոջ  
մասին արդեն բարձրաձայն խոսում եյինք,  
առանց քաշվելու կուտոյից, վորը միայն  
մոնչում և խորհուրդ եր տալիս մեղ.

— Զգույշ, վորդեքս, մի մոռանաք, վոր  
դուք զինվորներ եք և գոյություն ունի  
կարդապահություն:

Վո՞չ, մենք այդ չեյինք մոռացել: Բայց  
ճիշտն ասած, մեզնից շատ շատերը, հա-  
մարյա բոլորս խուլ ու կույր եյինք դար-  
ձել, իսկ մեր այդ խոսքունից ու կուրու-

թյունից մեծ վարպետությամբ ոգտում  
ելին կտրիճ դյուղացիները։ Նրանք հաղ-  
թեցին։ Նրանք շատ լավ ելին վերաբեր-  
վում դեպի մեզ և այն շիկահեր տիկինը  
կարող եր շատ բան սովորել նրանցից։ ո-  
րինակ— նրանք շատ լավ կհասկացնելին  
նրան, թե ինչպես պետք ե գնահատել աղ-  
նիվ մարդկանց։ Յերբ մենք հեռանում ե-  
մինք այնտեղից, ուր յեկել ելինք արյուն  
թափելու դիտավորությամբ, մեղանից  
շատերը ծաղիներ ստացան։ Գյուղի փո-  
ղոցներից անցնելիս մեզ վրա նետում ելին  
վոչ թե քարեր ու աղյուսներ, այլ ծա-  
ղիներ, իմ բարեկամ։ Յես կարծում եմ,  
վոր մենք դրան արժանի ելինք։ Վաս-  
հանդիպումը կարելի յէ մոռանալ լավ հր-  
ժաժէշտից հետո։

Նա ծիծաղեց, հետո ասաց.

— Ա՛յ, այս պատմածս դու պետք ե բա-  
նաստեղծության վերածես, վինչենցո...

Ներկարարը մտազբաղ, ժպտալով պա-  
տառիսանեց.

— Այո՛, դա շատ հարմար նյութ ե մի  
պոեմայի համար։ Յես կարծում եմ, վոր

կկարողանամ այդ անել։ Քանի և հինգ տա-  
րին լրանալուց հետո, մարդ վաս քնարեր-  
դու յէ դասոնում։

Նա մի կողմ նետեց արտքն որորված  
ծաղինը, նորը պոկեց և յետ նայելով,  
հանդարտ շարունակեց.

— Մոր կրծքից մինչև սիրեցյալի գիրկը  
տանող ձանապարհն անցնելուց հետո,  
մարդ պետք ե ձգտի ավելի հեռու... դե-  
պի ուրիշ յերջանկություն...»

Կիականագործը լուել եր որորելով դի-  
նին քաժակի մեջ։ Խաղողենիների այն  
կողմը, ներքեւում մեզմ աղմիկում եր ծո-  
վը։ ծաղիների բուրմունքը լողում եր  
տաքացած ողում։

— Արևն ե, վոր մեզ դարձնում ե այս-  
պես ծույլ ու այնքան թույլ, — վինթինթաց  
վականագործը։

— Այլև ինձ ուժվար ե հաջողվում քը-  
նարերգական բանաստեղծությունը։ յետ  
շատ դժուհ եմ ինձանից— ասում եր վին-  
չենցոն շարժելով նուրբ հոնքերը։

— Դու վորեե բան արի՞ր։

Ներկարարը միանգամից քպատասխա-  
նեց։

— Այս, յերեկ յերեկոյան, «Կոմո» հյու-  
դանոցի կտոռը վրա: Ու ակսում ե իար-  
դալ կիսաձայն, մտազբաղ, կարծես յեր-  
գելով:

Արեվը աշնան յուր հոգեկարքի  
մեղմիկ շողերով  
Ամայի ափի վաղեմի, մամռոտ  
ժայռերին ընկալ  
Յեկ տես, թե ինչպես ալիքներն անկաշու  
կուլ տվին նրան դեպի սառ ծոցը  
կապուտակ ծովի  
Դեղնած տերեմներ ծառ ու տունկերի  
Վորպես անկինդան յեկիներանդ հավերը  
Շողին են տալիս զոր վրփուրի մեջ.  
Իսկ գունատ յերեխնքը տիսուր է, ցաւկոտ  
ծովին և մռայլած,  
Արեվը միայն թեքվելով դեպ մուտք՝  
Կը ժպտա անչար:

Յերեկուն ել յերեկար ժամանակ լուռ ե-  
րին. ներկարարը գլուխը կախ գցած, նա-  
յում ե գետնին, իսկ մեծ, ծանը միալանա-  
գործը ժպտում ե և վերջապես ասում ե՝  
— Ամեն բանի մասին կարելի յե պատ-  
մել գեղեցիկ կերպով, բայց ամենից լավ  
ե խոսել լավ մարդու մասին, յերդեյ լավ  
մարդկանց:

## Հ Ո Գ Վ Ա Ծ Ն Ե Ր

- I. Ա. Շահումյան — Մ. Գորկու մասին  
II. Ա. Մուալյան — Գորկու հեքիաքները

## I. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսիմ Գորկին ոռուս բանվորների սիրելին ե։ Յեվ դա միանգամայն հասկանալի յէ։ Թուրո զալով ժողովրդական «ստորին» խավից, ինքնուս-գլուղ, նա իր մեջ դարձացրեց խոշոր գեղարվեստական տաղանդ։ Ապա հասնելով դրական փառքի բարձրունքներին, դառնալով այսաշոնական ընթերցող հասարակության կուռքը՝ նա յեկավ իր բնական դարձացման ընթացքով՝ բանալորների մոտ, վորոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց յերգիչն ու կենցաղագիրը։

Մաքսիմ Գորկին յերբեք չի գտնվել կյանքի արդի տերերի բանակում, յերբեք չի յեղել «հրճվողների, պարապ զրուցողների շարքերում»։ Բայց մինչև 1905—1906 թվականները, իր դեռևս չձեւավորված,

վարդապույն, ռամկալար— ըմբոստ տրա-  
մակրությամբ, յուր «քանաստեղծական  
հողմազգաբարի» հատկությամբ, նաև կա-  
րող եր լինել սիրելի մեղանում «հասա-  
րակական կարծիք» ստեղծող պաշտոնա-  
կան (այսինքն բուրժուական) ինտելիգեն-  
տական հասարակության կողմից: Բայց  
յերբ Գորկին ներկայեց վառ կարմիր գույ-  
նով, և յերես դարձրեց բուրժուական հա-  
սարակությունից՝ դրանց թվում նաև իր  
արհեստակից գրողներից, վորոնք այդ-  
ժամանակամիջոցին կորցրել ելին ամեն  
մի հակում դեպի վարդապույնն անդամ,  
այն ժամանակ Գորկին խորույն նրանց աչ-  
քում զբկվեց իր հմայքից: Յերեկվա յեր-  
կըրապատճեների աերը վերաբինվեց սառ-  
նությամբ, դժոհությամբ, անդամ յա-  
տելությամբ դեպի նա: Ներկայումս դուք  
չեք գտնի վոչ մի այսպիս կոչված՝ «առա-  
ջապահական» թերթ, մայրաքարտաքի կամ  
գալարական, վոր ժամանակ առ ժամա-  
նակ, այս կամ այն ձեռով, դիտակցաբար  
թե անդիտակցորեն, վրիժառու չկանոն  
Գորկուց, նրա համար, վոր նաև յերես

դարձրեց «հասարակությունից» և գը-  
նաց բանվորների մոտ: Յեւ առհասարակ  
միջոցների մեջ խորություն չդնող բուր-  
ժուական մամուլը, այդ դեպքում կանդ  
չի առնում հաճախ ամենամեջույղատրելի  
ձեռների առաջ, վորպեսզի վրեժինդիր լինի  
իր յերեկվա սիրեկուց:

Այդպիսի «ձեռների» նմուշները մենք տես-  
նում ենք ի միջի այլոց նաև մեղանում՝  
Բազվում և դրանցից մեկի վրա, Գորկու-  
կիցը վրայածքների առթիվ՝ մենք կուղե-  
նալինք զարձնել ընթերցողի ուշադրու-  
թյունը:

Ընթերցողը յերեւի չի մոռացել «Բաղու»  
թերթի քննադատ Ա. Այլազովի՝ հերոս-  
տրադիմոն վոտենձությունը, նաև հան-  
կարծ, իր համար իսկ անսպասելիորեն  
վառվեց այնպիսի քնքությամբ դեպի-  
«արկմիտիլիների» յերդիչը, այնքան ուժեղ  
«ափառեց» «խեղճ Գորկուն» վոր անդամ  
«Բաղու»-ի խմբադրությունը դրանից ի-  
րեն անհարմար դզաց: Նրան հետևեց

Վերջեղս այդ թերթի մի այլ աշխատակիցը՝ Գր. Ստարցելը:

Նրա անցյալ թերթոնը Գորկու վերջին յերկու պատմվածքների («Տրտունչներ» և «Մորդովկա») մասին, իրենից ներկայանում եւ այնպիսի մի նմուշ բուրժուաֆիան ինտելիգենտական «ձմարտության»՝ Գորկու մասին, վոր մենք նրան յեռանդուն կերպով հանձնարարում ենք մեր ընթերցողի ուշադրությանը: Տվյալ գեղքում հարցը միայն նրանում չե, թե դուք ե դալիս ընդհանրապես Գորկին Ստարցելին, թե վոչ, թաղում ե նա նրան, թե խոհում ե բարի պաշտոնակցի նման: Այդ բոլորը, գուցե վերջիկերջո ճաշակի խոնդիր ե: Մարզուն դուք չի գալիս Գորկին և նա այդ արտահայտում ե. ուղում ե նա թաղել Գորկուն և թաղում ե: Ի՞նչ կարելի յե այսուել նրա գեմ առարկել: Բայց հարդելի Փելեստոնիստը տվյալ գեղքում չի բավականում դրանով, նա իր ջանքերի մեջ հասնում ե մինչև քրեականության՝ դարձանալի՝ անդամ այնպիսի՝ «հրապարակախոսների» համար, ինչպիսին ե

Ստարցեն ու այնպիսի թերթի համար՝ ինչպիսին ե «Բագուն»:

Ինքներդ դատեցեք:

«Տրտունչներ» պատմվածքի մեջ, ի միջի այլոց, վերնապղի տակ, փակազծերի մեջ զրված ե. ապրայի հիտությունները: Ճապոնական պատերազմին մասնակցած սպան պատմում ե պատերազմում զինվորներից ստացած իր սպավորությունների մասին: Նա «զանգատվում» ե նրանց՝ այդ զինվորների զգեստը հագած բանվորներից ու դրաւացիներից, վորոնք պիտի իր թեվերանորոգեն Ռուսաստանը: Նա ստում ե, վոր չի հալատում նրանց գործունեյությանը: Ուուս մարդը, նրա ասելով, «պատախվ ե իր եյությամբ» և ընդունակ չե վոչ մի նոր բանի: «Ուուսը չի կարող լինել սոցիալիստ, նրան դժու համար մի ինչ վոր բան ե պահասում»: «Յես չեմ հավատում սոցիալիզմին»— ասում ե դանդատվող սպան: — «Նրան հնարել են հրեաները: Դա ուղղակի է ափյուռս աշխարհի ցըր-ված մի ժողովրդի միանալու փորձն ե: Սոցիալիզմ, սիոնիզմ, դրանք յերեկի նրա

Համար միւլնույնն ե...»։ Ապա սպան իր  
գանձատների մեջ, հարձակվում ե ոռւս  
պատանեկության ղեկավարների վրա (ըն-  
թերցողն յերեխ համարնում ե, թե ինչ ղե-  
կավարների մասին ե խոսքը) մեղադրում  
ե նրանց բոլոր մահացու մեղեքերի մեջ,  
անվանում ե նրանց «խարեւբաներ», «դա-  
վաճաններ», համարյա թե մարդասպան-  
ներ՝ ոռւս պատանեկության նկատմամբ։  
Յեվ ահա հանդես ե գալիս Ստարցելը, վո-  
րը Գորկուն հոմանիշ ե դարձնում սպա-  
յին, համոզում ե ընթերցողին, վոր սպա-  
յի բերանով խոսում ե ինքը Գորկին...  
Յեվ... Ո՞վ ճակատագրի ծաղր, Ստարցելը  
դրահավորում ե պաշտպանելու համար ոռ-  
ցիալիզմը, պաշտպանելու համար ոռւս  
դյուլացուն և բանվորին Գորկու հարձա-  
կումներից ու զրաքարտություններից։ Կա-  
րող եք յերեակայել, ընթերցող, այդ  
պատկերը...»

Գորկու մյուս պատմվածքը «Մորդով-  
կա»-ն ե։ Ստարցելը մեղ պատմում ե, վոր  
իրը թե Գորկին այդ պատմվածքի մեջ  
դուրս ե բերել կուսակցական աշխատան-

քին նվիրված սոցիալիստ բանվորի մի-  
տիպ, նա կին ունի, վորը դժուռ և  
դրանից և պահանջում ե, վոր նա ձեռք  
քաշի կուսակցությունից և հոգ տանի բա-  
ցաւագես իր ընտանիքի մասին։ Նրա մեջ՝  
սպատմում ե Ստարցել՝ տեղի ե ունենում  
պայքար՝ մի կողմից ընկերները, գաղա-  
փարները, մյուս կողմից՝ գեղեցիկ կինը։  
Սերը գեղի կինը, դեպի նրա գեղեցիկ  
մարմինը հաղթանակում ե և բանվորը  
թքում ե կուսակցության վրա, իր իդեալ-  
ների վրա և հրաժարվում նրանից։ Յեվ  
Ստարցելը, նկարագրելով այդ բոլորը,  
վրա մեջ ել նկատում ե Գորկու հուսա-  
խարություններն ու գանգատները, գըտ-  
նում ե, վոր Գորկին զրաքարտում ե բան-  
վորներին։ Նա քիչ ե մնում Գորկուն աև  
հարյուրամյային հայտարարի, այս նա նր-  
կարագրում ե նրան այլպես, նա համե-  
մատում ե նրան դրանց հետ։ Ու դարձ-  
յալ՝ բանվորներին Գորկու «զրաքարտու-  
թյուններից» ու «տրտուններից» պաշտ-  
պանողի ազնիվ գերը։

Բայց քաց արեք ընթերցող «Современныи

մ ի ր »-ի (այս տարվա) առաջին համար  
րը և կարդացեք այդ լալ պատմվածքը:  
Տեսեք, թե ի՞նչ հեքիաթներ եւ ովատմում  
ձեզ Ստարցելու: Ճիշտ եւ, վոր Գորկու  
պատմվածքի մեջ կամ բանվոր Պալել Մա-  
կովը և նրա կինը՝ Դաշնի: Ճիշտ եւ, նա  
անձնուրաց կուսակցական աշխատող եւ,  
իսկ կինը և նրա հայրը՝ Վալելը՝ դժուն  
են նրանից և հաճախ հանդիմանում են  
նրան այն պատճառով, վոր նա քնտանիքի  
(կնոջ և յերեխայի) շահերը դոհարերում  
եւ այն մեծ գործին, վորին նա ծառայում  
է: Բայց միայն այդքանից: Գորկին նկա-  
րագրում եւ և նկարագրում եւ ճշգրիտ ու  
շնորհալի՝ պատշաճոր բանվորների կյան-  
քում առվորական յերկարակիություններն  
ընտանիքի հետ և այն հոգեկան դրաման,  
վոր նրանք վերապլում են: Այստեղ կան  
այլ դրամայի լուլոր միութեամբները,  
բայց վո՞չ մի խոսք, վոչ մի ակնարկ այն  
մասին, վոր Պալելն իբր թե առարտված  
դուրս յեկան, վոր նա մոխեց իր գաղա-  
փարները կնոջ գեղեցիկ մարմնի հետ:  
Պալել Մակովը պատմվածքի մինչև վեր-

ջը մնում եւ նույնը, ինչպես եր նա բա-  
կըրում:

Պատմվածքի ակողից մինչև վերջը, վոչ  
Պալելի, վոչ եւ հեղինակի գլխում հարց  
անդամ չի ծագում այն մասին, վոր իբր  
թե պետք եւ ընտրել առհասարակ յերկու-  
սից մեկը—ընտանիքը, կամ բանվորական-  
դործը: Այդ հարցը պատմվածքում բնակ-  
չի դրված: Իսկ գուշ հիմա լսեցեք պ.  
Ստարցելին: Նրա խոսքերով միայն Պալե-  
լի մասին չե, վոր գանգատվում եւ Գոր-  
կին: Նա մենակ չե, Գորկին գանգատվում  
եւ՝ հայտացնում եւ Ստարցել,՝ վոր  
կանայք ու ընտանիքը վշացնում են բո-  
լոր «գիտակից» բանվորներին, փետում են  
նրանց թերը և դարձնում վողորմելի,  
անդույն ու անկամ մարդկիկ: Ստարցել  
հայտացնում եւ, վոր Գորկու աչքում  
նակելին «հողմագլաւարները» բոլորը  
դարձել են «թրջված հավեր»:

Յեկ հասկանալի յե, վոր Ստարցել նո-  
րից «ստիպված ե» պաշտպանելու բան-  
վորներին Թորկու: Կրծարարություննե-  
րից ...

Ինչո՞ւ համար ե հնարել այդ բոլոր  
Ստարցեր։ Արել ե նա դիտակցորեն, թե  
նրան վորեև մեկը ծառայություն ե մա-  
տուցել՝ սխալ հաղորդելով պատմվածք-  
ների բովանդակությունն ու նա յել, ան-  
ձամք չկարդալով, շտապ կերպով, հավա-  
տալով ուրիշներին, «թիմել ե» իր ամենո-  
րյա պարտադիր հոգվածը։ Կամ թե նա  
կարդացել ե պատմվածքները, բայց նրա  
մեջ տեղի յե ունեցել վորոշ հոգեբանական  
բեկում և նա այդտեղ տեսել ե այն, ինչ  
նրան պետք եր նրա համար, վորպեսզի  
զրի չենց այցելիսի «անհրաժեշտ» հոգ-  
ված, — դա իհարկե, դժվար ե պարզել։

Բայց դա մեզ համար կարեոր ել չե։  
Կարեւորն այն է, վոր բոլոր նման «քննա-  
դատները» խոսելով բանվորական գլող  
Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ  
այն բոլորի մասին, ինչ վերաբերվում ե  
բանվորներին, վոչ մի կերպ չեն կարո-  
ղանում խուսափել դիտակցորեն թե անդի-  
տակցորեն՝ ստից, ինեղաթյուրումներից,  
զրադարտություններից։

Գորկին — տրտնջող, հռասահատված և  
զացակամած։ Գորկին — բանվորներին, սո-  
ցիալիզմը ոլորարտող, Գորկին — համար-  
յա թե սևաբյուրակային։ Վորալիսի աղ-  
տակ ե Ստարցեի և իր նմանների համար  
Գորկու վերջին հոգվածը «ինքնուս դը-  
րովների մասին» տպակած։ «Современный  
мир»-ի վեհարչարի համարում։ Հայտ-  
ուցու զիկմազ մդմ վլդիտ զտժմայ մայ դ զզ  
համելի դառնում տիրող տարրերի համար,  
բուրժուական ինտելիգենցիայի համար,  
այնքան ավելի մոտ ու գնահատելի յեր  
դառնում բանվորների համար, պրոլետա-  
րական ինտելիգենցիայի համար, «դե-  
մու»-ի համար առհասարակ։ Հաղարա-  
վոր թերեւ ճպվում եյին գիտակից կյանքի  
համար արթնացող, «ժողովրդի ծոցից յե-  
լած» գրականությամբ հետաքրքրվող  
մարդկանց սրտերից դեսպի իրենց պանձա-  
մի յեղայրակիցը — ինքնուս գրող Մաք-  
սիմ Գորկին։ Ով կարիք եր զգում արտա-  
հայտելու իր զգացմունքներն ու խոհերը  
մոտիկ մարդու առաջ, ում մեջ ցանկու-  
թյուն եր հզանում զրել վորեւ բան, փոր-  
ձել իր բախուը գրականության մեջ, նը-

բան եր ուղարկում ձեռագրերը, նամակ-  
ները, վոտանավորները: Գորկու թղթա-  
կիցների մեջ դուք կհանդիպեք բանվորնե-  
րի, դյուլացիների, կոչկարների, դրո-  
նապահների, խոհարարուհիների, սպասու-  
հիների, պունիկների, խնձորավաճառի,  
լվացարուհու, գերեզմանապահի, զինվորի,  
աքսորականի, տաժանակիրների և այլն և  
այլն: Յեվ նրանց բոլոր գրածքները, ինչ-  
պես յերեսում ե հոգլածից խնամքով և  
զարմանալի սիրով ու ուշագրությամբ  
կարգվում ե ուսումնասիրվում և Գորկու  
կողմից: Նա գրագրություն ունի նրանցից  
շատերի հետ, խորհուրդներ և տալիս, թե  
ով ինչպիսի գրքեր պետք ե կարգա, ի՞նչ-  
պես գրել, ի՞նչ գրել: Յուրաքանչյուր տո-  
ղամիջին նկատելի յեւ հեղինակի զարմանալի  
նուրբ, աղնիվ հոգին, լցված անսահման սի-  
րով գեպի «սարսափելի կյանքի մարդկանց»  
ինչպես ինքը արտահայտում ե նրանց մա-  
սին:

Առան գրականության մեջ, գոնե արդի-  
իքականության՝ մենք չդիտենք մի այլ  
գրողի այդ աստիճանի բարոյակեա՛ նըր-

քազգաց ու մաքուր, ինչպիսին Գորկին է:  
Հարկավ, մենք այդ ասում ենք վոչ միայն  
վերոհիշյալ հողվածի հիման վրա, այլ նը-  
կատի ունենալով նրա բոլոր գրվածները,  
նրա ամբողջ գրական գործունեյությունը.

«1906-ից մինչև 1910 թիվը— դրում ե  
Գորկին,— յես կարդացել եմ ամիելի քան  
400 ձեռագիր— նրանց հեղինակները «ժո-  
ղովրդական գրողներ» են մնշող մեծա-  
մասնությամբ, այդ ձեռագրերը գրված  
են կիսագրագետ, նրանք յերբեք տպված  
չեն լինի— բայց նրանց մեջ արտացոլում  
են մարդկային կենդանի հոգիներ, նրանց  
մեջ հնչում են մասսաների անմիջական  
ձայնը, նրանք հնարավորություն են տու-  
լիս իմանալու, թե ինչի մասին ե մտածում  
անհանգտացած ոռւս մարդը վեց ամսյա  
ձմեռվա յերկար գիշերներին»... Յեվ,  
վորակաղի բաժանի ընթերցողի հետ իր  
տպապորտություններն այդ ձեռագրերից՝  
Գորկին բաժանում ե նրանց խմբակների,  
բերում ե մեծ քաղվածքներ իր ինքնուս  
գրողների պատմվածքներից, նամակներից՝  
բանաստեղծություններից: Նա փորձում ե

պարզել, թե ինչն ե ստիպում գրել, ինչք  
մասին են նրանք գրում, ի՞նչպես են վե-  
րաբերվում կյանքին և դրականությանը:  
Նա համեմատում ե պաշտոնական գրա-  
կանությունը, ապլած գրականությունը—  
«ինքնուսների» գրվածքների հետ, նոր  
«ժողովրդական ստորին խավերից» յեկող  
գրականության հետ... «Առաջինում— ա-  
սում ե Գորկին, —մենք տեսնում ենք հու-  
սալքում, ճանաչիած գրականագետների,  
ջղային, քմահաճ վոտնձգություններ, վո-  
րոնը ինչպես իրենք են հայտարարում—  
հողնել են ժամանակակից լարվածությու-  
նից ու բարդությունից». յերկրորդում  
— «պարզ ու անկեղծ» մարդկանց, «սար-  
սալինի կյանքի» մարդկանց, սոված  
մարդկանց գրականության մեջ՝ մարդ-  
կանց, վոր հաճախ գրում են բանտերից,  
աքսորավայրից, տաժանակիր աշխատանքի  
վայրերից — այստեղ տրամադրությունը  
«բարձր ե, գործունակ, հաճախ վողեչունչ»:

Գորկու հեղինակներից մեկը գրում ե.  
«Զգում եմ, բարձրանում ե իմ՝ մեջ ժի-  
առելի ուժ— ասաց իլիա Մուրոմեցը ծե-

րութիներին, յերբ լսմեց մաճառի հակա-  
թառը. այդ նույնը յես կարող էլի ասել  
իմ մասին հոգեկան տեսակետից: Սրաւա-  
խ գուստ գա անասելի ծիծառելի կլիներ.  
յես չատ փոքր եմ, խեղճ ու կըակ և որըս-  
տորի թուլանում եմ զանայիան առվուժնե-  
րից ու կարիքների պատճառով: Անախորժ-  
րից ու կարիքների պատճառով: Անախորժ-  
րի ինձ համար, յես կուզենայի մի  
վորին բացառիկ լավ, սիրուն բան անել  
այս աշխարհում»... Մեկ ուրիշը «Աշնան  
որեր» վստանալորի բանվոր հեղինակը,  
որցականչում ե. «ո՞վ գիտե, գուցե յես  
խելագարվում եմ ուրախուրյունից, վոր  
ապրում եմ լույս աշխարհում»: Գորկին  
հիշված վստանալորից մի հատված ե մեջ  
ուրում:

Վասիայի անկյունը մութ ե ու խնախ,  
Կյանքը մի վշտով, հողսերով.  
Բայց... ուրսին ե վասյա Դյուժինը,  
գիտե վասյան, կյանքն եւ լուսաստ:

Վասյան ամուր մարդ ե  
թեպետ անծածյալ մբսելուց՝  
Նրա տաքությունն ե  
Յերեսուն ութ ու յերեք տասներորդական:

Բայց մեր վասյան չի տնքում,  
Թհաթափ չի լինում  
Զե վոր ցավն հոգուն չի դիպէում  
Մնացած՝ դատարկ բան ե»:

Մի ուրիշ բանաստեղծ, 23 տարեկան  
դյուտացի, ոլորում ե—

«Դժբախտ կյանքի, խալար ու վորո կյանքի  
մարդիկ,  
Զեզ յեղբայրութեն ուղարկում եմ իմ յերկու  
պլարթ.  
Յես յերդում եմ խոսն ու ծաղկումք, իմնդը  
կանանց ու կույսերի.  
Կյանքի խինդը, մանկությունը, մեր հայրենիքն  
եմ յես յերդում:  
Վշտի մասին շատ են յերգի, վշտից, ցալից  
կշտացի ենք.  
Հողսից, ցալից վողջ աշխարհն ե հողնել արդեն.  
Հողնել ենք վեճերից, մեր չարսությունից. սիրոս  
ուղում ե խնդում.  
Զեռքերս մեկնում եմ դեպի գործ—նոր բազդ  
կոելու»:

Կան շատ հետաքրքիր այրձակ հատիւծ—  
ներ միենույն զվարթ, կենառութախ, մար—  
տական տրամադրությամբ լի: Առանձնա—  
պես հիշտուակելի յե վառ, դունեղ մի հատ-

ված, վոգեշունչ մի հիմն նվիրված բնու—  
թյանն ու կյանքին, բանվորի գրած «Յե—  
րախտապարտ եմ, բնություն» բնորոշ վեր—  
նարդի տակ:  
«Ծնթերցողը կարող ե կարծել— ասում և  
գորկին— թե դա բոնազբոսիկ ու այդ  
սրատաճառով ել այլքան բարձր ե հնչում»:  
Բայց դա անիրավացի կլիներ, նախ և  
առաջ, առարկում ե նաև «Ճաղիներ հա—  
վաքելու համար, չե՞ վոր նրանք պետք ե  
մի տեղ բուսնենս»: Հետո Գորկին համե—  
մատում ե յուր նյութերն ինքնուս բա—  
նաստեղների վերջին տարիներիս լույս  
տեսած մի քանի ժողովածուների հետ:  
Նրանց բոլորի մեջ ել հնչում են միենույն  
զվարթ հանդերը:

Հետաքրքրության համար առաջ ենք բե—  
րում մի քանի նմուշներ: Մեկը գրում ե —  
«Եյո՛, ընկեր. Ժամը չե՛ վորբարու:  
Ե՞ր աշխարհում աելը չե վշտի:  
Ա՛յլ յերգեր են պետք յերգելու—  
Վորոնց մեջ բոզքը մեր լովե»:  
— Մյուսը կալուղայի գյուղացի Սա—  
լինը՝

«Կյանքը—կորիլ եւ,  
Ուր յես մարտնչում եմ.  
Թող բաղդը հարվածի—  
Եհս չեմ ընկճի»:

— Ահա և գյուղացի Շկուլովը.

«Միայն աշխատանքով  
Մենք բոլորս ենք ապրում.  
Աշխատանքն եւ մեր հայրը  
Բախտի դարբինը:

Նրա չնորհիլ կթոթափենք  
Ծղթաներն ու լուծը.  
Համարձակ առաջ»:

Ապա Գորկին առաջ եւ բերում այդպիսի  
Ենքնուս բանաստեղծներից մեկի սարսաւ.  
Փելի ինքնակենուազրությունը ու մի շարք  
բանաստեղծությունները, վորոնք, այնու-  
ամենայնիվ, լի յեն միհնույն խրոխտ, կեն-  
սուրախ զգացմունքով։ Առաջ ենք բերում  
զբանցից մեկը։

### «ՏԱՐԻՆ»

Տառը հոտառին, խոսքը՝ խոսքին,  
Սեղմ տողեր են ծառանում  
Դեղի վառ կյանք, դեղի նոր կյանք  
Ալվան սրանք կանուխ են։

Ժամը աժամին, որը՝ որին,  
Հաղեստն են ընկնում տարիները,  
Կյանքը ծաղկում եւ, վառվում կրակով  
Այնակարող աշխատանքի։

Միտքն ու ձեռքը դանդաղորեն.  
Հաղթահարված խավարի մեջ  
Դեղի ճարտության թաղավորությունը  
Հալիստենական ուղին են հարթում  
յերկրում։

Այդքան կորովալից ու ինքնավատահ եւ  
Հնչում «մասսաների անմիջական ձայնը»,  
«ողարդ ու անելեղծ մարդկանց ձայնը»...  
Այդ հանդամանքը անմիջական արացույց  
եւ ծառայում տողերիս գրողի համար միշտ  
այն անլինելի վիաստին, վոր մեղանում,  
Ռուսաստանում, այսպես կոչված «մաս-  
սաների սեակցիա», ուստիցիան ցածից— դո-  
յություն չունի։ Մեր սեակցիան գլխավո-  
րապես կառավարական եւ, արագին։  
Նյութական, վորը ճիշտ եւ, գրավել եւ  
քուրժուական, առավելապես բուրժուատ-  
կան— ինտելիգենտական խամերը, բայց  
միայն մի ծայրով եւ կաչում լայն ժողո-  
վրդական մասսաներին։ Միայն կարճա-

տես, արտառոց դիտողության դեպքում և  
միայն անձնական հուսահասության և  
ջղայնության ակնոցների միջով նայով  
մարդուն, տեսաբանության մեջ անհան-  
տատ մարդուն կարող է թուալ, թե որովե-  
տարական կաղմակերպությունների, միու-  
թյունների, ակումբների կործանմելը,  
ներկայում գոյությունն ունեցող նրանց  
փլատակների մեջ՝ կենդանի աշխատանքի  
բացակայությունը՝ հետեանք են բանվոր-  
ների հոգնածության ու հուսալքության,  
նրանց հին գաղափարներից բաժանվելուն,  
հետեանք ներքին ռեակցիայի: Հարկավ,  
կարելի յե ցանկանալ մեր բանվորներին  
ավելի դիտակցություն, ավելի ծանոթու-  
թյուն իրենց յելրուակամն յեղայրակից-  
ների փորձի հատ, ավելի յեռանդ վերևից  
յեկող վայրի ռեակցիայի կողմից մեկը  
մյուսի հետեւից իրվող իրենց դիրքերի  
պաշտպանության գործի մեջ՝ բայց անի-  
բավացի ու անխմաստ կլիներ ասել, թե  
Կրանք իրենց գիրքերը զիջում են կամո-  
վին, չնորհիլ ներքին ռեակցիայի: Կըրկ-  
նում ենք. Գորկու չորս հարյուր թղթա-

կիցները միայն հաստատում են այդ ան-  
վիճելի փաստը:

Ընթերցողն իհարկե, արդեն նկատեց թե  
վորքան բացասաբար եւ վերաբերվում Գոր-  
կին մեր սլաշտոնական գրականագետների  
«Քմահամ» ու ջղային վոտնձդություննե-  
րին» և մյուս Վորմից, վորպիսի ուրախու-  
թյամբ ենա արձանագրում մասսաների  
սոորին խալերի գվարիթ, կենսունակ տը-  
րամադրությունը: Վորպեսզի այդ առթիվ  
վոչ մի կամկածի տեղ չմնա, մենք չնայե-  
լով նրա մեծ ծավալին, առաջ ենք քերում  
Գորկու հողվածից մի ծայր աստիճանի  
վառ հատվածը:

«... Յերբ կըրդում եմ կույտուրական  
թարդու խոճուկ աշխատությունը, վորը  
տիսուր, տգեղ, հաճախ խել բորոտի վրի-  
ժառու անկեղծությամբ մերկացնում ե իր  
թարախակալող կերպերը... աարմուռ ես  
զգում մի յերկը համար, ուր ինտելի-  
գենցիան համարյա ամեն մի տասնամյա-  
կից հետո գլուխ սուզգում ե Փատալիդմի  
ճահիճը և հանդում ե ինքնադատակետ-  
ման ու ինքնաթքման, ախալ կերպով կոչե-

լով այդ տղեղ զբաղմունքը — ինքնակատարելագործում»:

«Անկեղծ եմ սասում — յես վոչ վոքի չեմ ուղարմ պիրավորել։ Յեզ ինչու համար։ Ուստականի ինտիլիգենտներն ինքն իրեն վիամակոր չիրարութ պիրավորում են. նաև այդի անում են միշտ մի այնպիսի հիվանդագին յեռանդութ ու վլրէով, կարծեա թե Ֆ. Մ. Դուստոյեվսկուն քննություն են ուղիս ինքնակետելու դիսությունից»։

«Բայց ուղում եմ սահել. պարոնայք. յեթե ձեր սիրու խառնում են, այդ սլուց ցեսի ընթացքում, վորոց միք վագեն. փողոցով կենդանի, առողջ, նոր մարդիկ ու յերեխաներ են ման դալիս, մանուկներ, իսկ նրանց մնասակար են տեսնել, թե ինչպես եք դուք լորձաթափ լինում։

Մատաղ ու սիրելի մեր յերկրում մարդիկ ջահել են ու զգայուն և իրենց ջահելությամբ անսահման դյուրագուաց են. իսկ ընկնավորությունն ու ամեն տեսակի ջըդաձությունները — վարակիչ են և զապիտի հիշել ի հարգանք դեպի կյանքը,

հայրենիքն ու մարտը։ Իսկ հարգելով ինքն քեզ — մի բղավիր, մի տնքա և յեթե հասել ե ժամը մեռնելու — մեռիր մեռակության մեջ. դա և՛ գերեցիկ ե և՛ առողջապահական»։

«Ինձ, հույս ունեմ, շարունակում ե Գորելին, չեն մեղադրի այսպիսի գեղատվության համար և չեն համարի ինչպես մի չար վոտնձգություն. յետ խոսում եմ մեծապես ցավելով նրանց համար, ով ցավ է կըրում, խորը վշտով դեպի նրանց, ով տանջվում ե, բայց եւ ավելի մեծ վախով այն յերիտասարդների համար, վլրոնք հողից բարձրանում են դեպի կուլտուրա, բարձրանում են ուրախ, ստեղծագործող աշխատանքի համար պարզած ձեռքերով և վորոնց համար գուք պետք եք, վորութեա բարեկամներ, վորութեա ուսուցիչներ և վոչ թե վորովես որինակներ ամեն տեսակի հոգեկան խեղաթյուրումների»։

Այս կրակոտ հատվածի մեջ ե Գորելին ամբողջովին։ Վորքան նման ե նա, ճիշտ չե՞ , հուսահատած, լացակամած, տրանջող, բանվորներին զրագարտող, առցիալիդմը. հո-

սեական գյուտ հայտարարող համարյա թե  
սեհարյուրակային այն Գորկուն — ինչպի-  
սին պետք եր համարել նկարագրած բուր-  
ժուական լրադիրը :

Վերջացնելով հոդվածը, մենք անհրա-  
ժեշտ ենք համարում նշել մի հանդամանք  
ևս, վոր չի կարելի լուսությամբ անցնել,  
խոսելով Գորկու մասին: Դա՝ մարզսիս-  
տական քննադատության կողմից արդեն  
նկատված Գորկու վոչ բավարար սկզբուն-  
քային տոկունությունն ե, նրա մեջ հետեւ-  
վողական մարզսիստական պարզ մտածե-  
լակերպի բացակայությունն ե: Տվյալ  
գեպօւմ, դա արտահայտվում ե Գորկու  
կողմից ինտելիգենցիայի դերի ու նշանա-  
կության սխալ, զուտ նարողնիկական լոմ-  
բանողության մեջ: Դա նկատելի յեւ և վե-  
րևի բերված հոդվածում, և Միհայլովս-  
կուց վերցրած քաղվածքից, վորի ողնու-  
թյամբ, ինչպէս պատմում ե Գորկին, նու-  
իր նամակների մեջ պաշտպանում ե ինտե-  
լիգենցիան իր բանվոր թղթակիցների հար-

ձակումներից և մի շարք սխալ յեղրակա-  
ցություններից, վոր անում և Գորկին իր  
հարուստ, այլ կողմերով լավ մշակված  
նյութից: Մենք այստեղ մանրամասն կանգ-  
չենք առնում Գորկու հոդվածի այդ կող-  
մի վրա: Կասենք միայն, վոր այդ սխալը  
Գորկու կողմից, ոլժախտաբար, պատա-  
հական չե: Գորկու աշխարհայցողության  
մեջ, մեր կարծիքով, կան բավականաչափ  
նարողնիկական տարրեր: Կան բաներ, վո-  
րոնք, ըստ յերեսութին նրան դժվար կլինի  
յուրացնել և կան բաներ, վորոնց դժվար  
կլինի նրան մոռանալ:

Զնայելով այդ բոլորին՝ Գորկին պրոի-  
տարական գրականության զարդն ու պար-  
ծանին ե:

Յել վերլուծած Գորկու հոդվածը ընդ-  
հանրապես և նրա մյուս նոր գրվածքներ-  
ը ըլերը հիշված «Տրտունջներ» և «Մոր-  
դովկան» ինչպես նաև նրա աքանչելի մին-  
յատուները նեապոլի գործադուլավորնե-  
րի մասին և Գենուեզի գործադուլավորնե-  
րի յերեխաների հանդիպումը, — վորոնք  
լույս են տեսել «Հեքիաթներ» վերտառու

թյամբ՝ ել ապէլի մոտեցրին Գորկուն բանվորներին:

Յեզ բանվորները հաղարտությամբ կարող են սուլ.

«Այս՝ Գորկին Մերն եւ նա Մեր նկարիչն է, մեր քարեկամն ու զինակիցը՝ աշխատանիքի ազատազրության վեհ պայքարի մեջ»:

Բագու, 1<sup>er</sup> 11 թ.

## II. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ—ՀԵՖԻԱԹՆԵՐ

Հայտնի յէ, վոր մի տասնամյակ առաջ այն որերին, յերբ Ռուսաստանը խոշոր պատմական գեղաքեր եր ապրում, հոչակավոր ոռու գլուղ Մաքսիմ Գորկին վորոշակի հարեց բանվոր դասակարգի շարժման: Ռուս բուրժուական մամուլը, վոր մինչեւ այդ որը «ընդունում» եր Գորկուն և նրան համարում խոշոր, տաղանդավոր գլուղ — այժմ աղմուկ լարձրացրեց. մեծ ու պրատիկ «քննադատներ» և հրապարակախոսներ շարախինդ ակնարկներ ելին անում Գորկու տաղանդի «չորացման», «այլասեռման» մասին և գուշակում, վոր «սոցիալ գեղմուրատական» ծրագիրը» վերջնականապես կսպանե Գորկուն, իրաեվ գեղարվեստագետի: Բանն այնուեղ հասալ, վոր մինչև անգամ մի հայ «սոցիոլոգ» հրապարակախոս ել սկսեց «վողբար» «Գորկու

տաղանդի «անվումը»: Այդ իմաստուն քըն-նադատները դատում էին այն սխալ տե-ասկետից, վոր իբր թե պրոլետարական շարժումը միայն և միայն տնտեսական — քաղաքական շարժում և Ա վոր այդ շար-ժումը վոչ մի առնչություն չունի գեղար-վեստի հետ, վորովհետեւ գեղարվեստը աղաղասակարգային է:

Բուրժուատական քննադատների մարդարե-ությունները չիրականացան: Ամփամա պան-դուխտը, Գորկին քաշվեց իտալական Կապ-րի կղզին և ակաց ստեղծագործել մի նոր, չունված թափով: Կարճ ժամանակամի-ջոցեմ նա լույս ընծայեց մի շաք տա-դանդավոր գրվածքներ. «Исповедь», «Ле-то», «Чудаки», «Городок Окуров», «Матвей Кохемякин», «Сказки», «Жа-лобы», վերջերս և «Детство» և այլն: Այդ յերկերը յեկան առայցուցելու, վոր պրո-լետարական աշխարհայցքն ու աշխարհա-զգացումը Գորկու գեղարվեստական ըստեղ-ծագործությանը հղոր թափի են տվել և հարստացրել: Վո՞ր բուրժուատական քննա-դատը այժմ կհանդինի ասել, վոր նոր

Գորկու յերկերը թույլ են գեղարվեստա-կանի կողմից, վոր նրա ստեղծած պատ-կերները կեղծ են կամ մտածածին:

Մի ուրիշ անդամի թողնելով խոսելու Գորկու նոր գրվածքների մասին, այս ան-դամ կանգ եմ առնում նրա «Հեքիաթների» վրա:

Կախարդական վոչինչ չկա հեքիաթների մեջ. նրանք կյանքի ստեղծած հեքիաթներ են. բովանդակությունը՝ Բատակիայի աշխատանքի մարդկանց առորյան և, նը-րանց մտքերն ու հույզերը, ուրախություններն ու պատմությունները: «Հե-քիաթներ» վողողված են խոր, մարդկա-յին անկեղծ սիրով ու մարդարեական հա-վատով գենի մարդկության պայծառ ա-պագան: Ամբողջ գրքից բուրժուատ և մի զար-մանալի ու վարակիչ լավատեսություն, կենսաթըթիս աշխարհաղղացում:

Ովքե՞ր են Գորկու Զերոսները — ժողո-վուրդը, Ժողովրդական մասսան — բան-գորներ, բանվորուհիների, ձկնորսներ, գեղջուկներ, գեղջկուհիներ, յերեխաներ: Գորկու նկարած գյուղերը ճիշտ ե, տակա-

վին չեն աղասովել նախապաշարմումքներից և կաթոլիկ յեկեղեցու աղջեցությունից, ըստյա և այնպես խորհն և դյուզացիների կենսումնակ բնագլը: Գյուղի վորդի քանիվորները գործարանում սոցիալիստ են գառնում, նրանց հայրերը զգալով սոցիալիզմի ուժը և հմայքը—որհնում են իրենց դավակների գործի արդարությունը—վորովհետև այդ «արդարությունից աշխատանքի քրտնքի հոտ և բուրում»:

Քաղաքը... ահա մի մանուկ քայլում և դեպի քաղաքը՝ «քաղաքը տնքում և յերջանկության ձգտող իր քաղմերանդ ցանկությունների տարնառպի մեջ, նա յեռում և աղբեկու կրքոտ կրամքով...» Այդպես և Գորկու քաղաքը՝ ապերելու այդ հզոր կամքը քանիվոր դաստկարգի կամքն և, նրա աշխատանքը կյանքի համար:

Մի քանի հեքիաթ մասսայական տեսարանների հաջող պատկերներ են տալիս. Նեարուում տրամվայի գործադուլի ժամանակ վտողոցում խոնված տմբովս ցույց են անում գործադուլավորներին պաշտպանելու, Գենուա քաղաքի կայսրանի

խոնված ամբոխը չտեսնված ցնծությամբ դիմավորում են Պարմա քաղաքի գործադուլավոր բանվորների սոված յերեխաներին... «— Կեցցե՛ մանուկ Պարման, գոչնց ամբոխը ու ըրջապատեց յերեխաներին... յերեխաներին բաժանեցին իրենց մեջ և յերդ ու ծիծաղով ցըլեցին— «իոզոյներից, ինչպես հակայական յերգեհոններից—ուրախ հնչում եր գեղի նոր կյանքի հորիզոնները քայլող մարդկանց ուրախ աղմուկը»:

Ուշադրություն բեկուող բանվորներետիպեր կան «Հեքիաթներում»:

Հոյակապ և Սիմպլոնի տոննելի փորելուն մասնակցած բանվորը: Նա հանդարտ կերպով պատմում է իր հոր վախճանը տոննելը վիրելու ժամանակի, սրամումում և և այն, ինչպես տոննելը յերկու կողմէց վիրուղ բանվորները մոտենում են մեկ-մեկու ու իրանց բաժանող վերջին քարը վշշում ու այնտեղ, խոր ու մութ տոննելում իրար անձանոթ բանվորները դրկախառնվում են հպարտ իրենց կատարած մեծ գործի գիտակցությամբ:

Ուժեղ ու ազդեցիկ տիպ են ներկարար  
քանիւր— խմբագրի տիպը, վոր իբահնի  
Քրանցի հետևողականությամբ կռվում է  
իր սիրած աղջկան նախապաշարումների  
դեմ:

Գեղեցիկ հեքիաթներ կան նվիրված յե-  
րեխաներին: Յերեխաները Գորկու սիրելի  
հերոսներն են— «յերեխաները կյանքի ձա-  
ղիկներն են», «նրանց ծիծաղը աշխարհի  
ամենագեղեցիկ յերաժշտությունն ե»:  
Մանուկ Պետերի տիպը շատ հաջող են և  
խոր տպավորություն են թողնում:

Բայց Գորկին ունի և մի ուրիշ սեր-  
սեր դեպի մայրերը:

Աչա գորովադութ մի մայր, վոր ան-  
տրունչ խնամում ե իր այլանդավիլ յերե-  
խային: Աչա մի ուրիշ մայր, վոր հայրե-  
նիքին դավաճանած վորդու սիրար սուր և  
մխում:

Կաթոլիկ յեկեղեցու ուժեղ բաղուհների  
ճղմած քանալորուհու տիպը ամենահաջող  
տիպը պիտի համարել «Հեքիաթների» կին  
տիպերի մեջ: (Այս հեքիաթը տպաղբյու

«Պայքարի» այս տարվա նո. Ն. 3 և  
5-ում):

Գորկու ազքից չեն վրխել կյանքի ըստ-  
վերային կողմերը. հերոսները զգում են  
իրենց մեծ գործի գիշարությունը— բայց  
ուժեղ են նրանց կամքը և առանց վարանե-  
լու չարունակում են իրենց ծանր պայքա-  
րի:

«Հեքիաթները» լույս տեսնելուց հետո  
այլևս վոչ վոք իրավունք չունի ասելու,  
վոր բանվորական կյանքը չի կարող գե-  
ղարվեստագետի վոգեղուել:

«Հեքիաթներից» մի քանիսը թարգման-  
ված են հայերեն: Հ. Հակոբյանի թարգ-  
մանած յերկու հեքիաթը լույս են տեսել  
առանձին «Ծառարակությամբ «Յերկու-  
պատմվածք» վերնագրով»:

1916թ.

ԵԱՆԱԹԱԻԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաքսիմ Գորկու «Մի անգամ աշնանը...» պատմվածքն առաջին անգամ տպագրվել է «Самарская Газета» թերթում, 1895 թ. հունիսի 20—22 (№№ 154—156): 1892 թվին այդ պատմվածքը գետեղվում է Գորկու «Очерки и рассказы» ժողովածուների յերրորդ հատորի մեջ: Խորհրդադարյան հաստից հետո, բայց առանձին հրատարակություններից, այդ պատմվածքը մանում է Գորկու լինակատար յերկերի ժողովածուի առաջին հատորի մեջ:

Ստեփան Շահումյանը «Մի անգամ աշնանը»... պատմվածքի հայերեն թարգմանությունը կատարել է 1901 թ. Բիգայում և առանձին դրամուկալ լույս և տեսել 1901 թվին թիֆլոսում:

II

Մ. Գորկու այս «Հեքիաթն» առաջին անգամ տպագրվել է բոլչեկիյան որդոն «Звезда» թերթում (1911 թ. № 21). Կերկար թարգմանությունը կատար :

վաճ և 1915 թ. Գետերութում լույս տեսած Մ.  
Գորկու «Сказки» զրքից: Բնկ. Մոավյանի այս  
թարգմանությունը առաջին անգամ տպագրվել է  
«Պայքար» թերթում 1916 թ. (№ 3 (7) և № 4 (8))  
Հունվարի 17-ի և 24-ի համարներում «Ազման» ծած-  
կանունով:

### III

Յերկրորդ «Հեքիաթն» առաջին անդամ լույս է  
տեսել «Звезда» թերթում 1911 թ. (№ 7): Այս  
թարգմանությունը նույնպես կատարված է 1915 թ.  
Գետերութում լույս տեսած Մ. Գորկու «Сказки»  
զրքից: Թարգմանությունը կատարվել է բնկ. Ա.  
Մոավյանը և տպագրվել է «Պայքար» թերթում  
1916 թ. (№ 44 (48)), 30-ին հոկտեմբերի Ա. Նո-  
վարյան ծածկանունով:

### IV

Յերերրորդ «Հեքիաթն» առաջին անդամ տպագրվել  
է 1912 թ. «Звезда» թերթում (№ 6-ում): Հայերեն  
թարգմանությունը կատարել է բնկ. Ա. Դաշտայանն  
այդ նույն թերթից և տպագրել է «Նոր Թառ»  
յերկարթաթերթում 1912 թ. № 5—6 միացյալ հա-  
մարում: Վերոհիշյալ րուր հեքիաթները դեռևս վաճ  
են Մաքսիմ Գորկու յերկերի մակատար ժողովածու  
14-րդ համարի մեջ «Сказки об Италии» ընդհա-  
նուր վերնագրի տակ:

### V

Ա. Շահումյանի — Մ. Գորկու մասին գրած այս  
հոդվածը տպագրվել է 1911 թ. Բագվի բուհուի կայս  
որդան «Современная жизнь» չարաթաթերթի ա-  
ռաջին համարում «Стивин» ծածկանունով: Այդ  
նույն ստորագրությամբ Շահումյանը մի հոդված և  
գիտելում «Современная жизнь»-ի յերկրորդ հո-  
մարում է. Ն. Տուտոյի կրօնական հայացքների  
մասին: «Современная жизнь» չարաթաթերթը լույս  
է տեսնում ընդամենը յերեք համար: Բագվի ժան-  
ի գարգելիսն «С. Ж.»-ի 4-րդ համարը կարանքի յե-  
րենթարկում և այդպիսով դադարում է թերթի հրա-  
մարակումը:

Թերթը խմբագրել է ինքը՝ Ա. Շահումյանը:

### VI

Բնկ. Ա. Մոավյանի — Մ. Գորկու «Հեքիաթ-  
ներ»-ի մասին գրած այս հոդվածը տպագրվել է  
«Պայքար» թերթում 1916 թվի մարտի 6-ի համա-  
րում, «Ազման» ծածկանունով: Բնկ. Մոավյանը հոդ-  
վածը գրել է 1915 թվին Պետերբուրգում «Жизнь и  
знание» հրատարակությամբ լույս տեսած Մ. Գոր-  
կու «Сказки» զրքի առթիվ: Այդ զրքի հեքիաթների  
մեջ մասը թարգմանաբար տպագրվել է «Պայքար»-ի  
համարներում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերկու լսութ— Գ. Հովհանն . . . . . 5

ՓԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.	Մի անգամ աշնանը— Ա.	Շահումյան . . . . .	13
2.	Հեքիաթ— Ա.	Մռավյան . . . . .	35
3.	Հեքիաթ— Ա.	Մռավյան . . . . .	54
4.	Հեքիաթ— Ո.	Դաշտոյան . . . . .	64

ՀՐԴՎՄՑՆԵՐ

1.	Ս.	Շահումյան— Մ.	Գորկու մասին . . . . .	84
2.	Ա.	Մռավյան— Գորկու հեքիաթները . . . . .	110	
		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	117	

ՀՀ Ազգային գրադարան



NL0311624

Б66

12436